

**«ՊՈՍՏՂԵՄՈԿՐԱՏԻԱ» ԵՎ  
«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ»  
Գազիկ Տերտերյան**

Սկզբնապես պրոֆեսիոնալների հաղորդակցման համար ստեղծված Ինտերնետն ընդամենը մի քանի տասնամյակում հասանելի դարձավ միլիարդավոր մարդկանց, իսկ նրա ներսում սկսեցին ստեղծվել տարբեր գործառնական ծանրաբեռնվածություն ունեցող սոցիալական կառույցներ: Այսօր արդեն Ինտերնետը պասիվ տեղեկատվական-հաղորդակցային կամ բիզնես-սերվիսային երեսույթ չէ. այն, հատկապես սոցցանցերի եւ բլոգների ի հայտ գալով, վերածվել է ինտերակտիվ տեղեկատվական սոցիալական միջավայրի եւ դարձել խիստ կարեւոր հասարակական եւ ռազմաքաղաքական գործոն:

Ստորեւ փորձենք ներկայացնել Ինտերնետը (սոցցանցային հանրույթի եւ բլոգոսֆերայի հետ միասին)՝ որպես ժողովրդավարության նոր, վիրտուալ, բայց գործուն ձեւ, որը սոցիալական առումով կոնֆլիկտի մեջ է մտնում արդի ժողովրդավարության (որը միանգամայն դիպուկ բնորոշվում է «պոստդեմոկրատիա» եզրով) իրողությունների հետ: Միեւնույն ժամանակ, կփորձենք դիտարկել նաեւ Ինտերնետի եւ սոցցանցերի դերը տեղեկատվական անվտանգության համատեքստում, քանզի այդ համալիրն արդի տեղեկատվական ցանցակենտրոն պատերազմների հզոր զենքերից է հանդիսանում:

**Ժողովրդավարություններ՝ իրական եւ վիրտուալ**

Անգլիացի սոցիոլոգ Քոլին Քրաուչն իր «Պոստդեմոկրատիա» աշխատությունում ներկա դարաշրջանը, թերեւս պոստմոդեռնի հետ համադրելով, սահմանում է որպես «պոստդեմոկրատական»: Նման համակարգում քաղաքական գործիչները պարփակված են իրենց սեփական միջավայրում եւ հասարակության հետ կապը պահպանում են մանիպուլյատիվ տեխնոլոգիաներով հագեցած PR-ի միջոցով: Պոստդեմոկրատական հասարակությունում պահպանվում է ձեւական ժողովրդավարական ատրիբուտիկան՝ ընտրություններ, իշխանության բաժանումը ճյուղերի եւ այլն, սակայն բոլոր գործերը տնօրինում է քաղաքական եւ ֆինանսական էլիտայի սիմբիոզը, ընդ որում՝ գերիշխողը

վերջին բաղադրիչն է: Բնութագրական է, որ որոշ մեկնաբաններ նման համակարգն անվանում են «նեոտոտալիտարիզմ»:

Ժողովրդավարության դասական սահմանումներին ներկա ժողովրդավարական հասարակությունների համարժեքության վերաբերյալ թերահավատությունն առկա է բազմաթիվ հետազոտողների մոտ, որոնցից հատկապես նշենք հայտնի տնտեսագետ Միխայիլ Դելյազինին: Բայց Քրաուչը, թերեւս, ոչ միայն ամենադիպուկ տերմինն է գտել, այլև գիտական հիմնավորում է տվել այդ ամենին:

Մասնավորապես, նա կարծում է, որ ժողովրդավարության մասին արդի պատկերացումները ենթադրում են «կառավարության սահմանափակ հնարավորություններ անսահմանափակ տնտեսությունում» եւ ժողովրդավարական բաղադրիչը հանգեցնում են ընտրությունների անցկացմանը, որոնք, ի դեպ, այդպես կարելի է անվանել միայն մեծ վերապահությամբ: Այս պայմաններում, համաձայն Քրաուչի՝ կառավարությունը դառնում է քավության նոխազ, որին մշտապես մեղադրում են արդյունավետ քաղաքականություն իրականացնելու անկարողության մեջ՝ այդ կարողությունը վերագրելով միայն «մասնավոր բիզնեսին»:

### **«Homo virtualicus»-ների հանրություն**

Վիրտուալ աշխարհում, ի տարբերություն պոստդեմոկրատական իրողությունների, չկան կառավարման հստակ արտահայտված հիերարխիկ կառույցներ. այստեղ կարծես թե իշխում են դասական դեմոկրատական բարքերը, թերեւս այնպիսիք, որոնք եղել են անտիկ Աթենքում:

Միւլենույն Ժամանակ, «վիրտուալ ժողովրդավարական հասարակության քաղաքացիները», որոնց տեղին է անվանել «homo virtualicus», իրենց հայտնի եւ ոչ այնքան հայտնի առանձնահատկություններով հանդերձ, իրական աշխարհի աժանցյալներն են, ուստի վիրտուալ եւ իրական հասարակությունների միջեւ որոշակի փոխգործակցությունը եւ նույնիսկ կոնֆլիկտն անխուսափելի են: Ներկայումս նման կոնֆլիկտները գրեթե առօրեական են դարձել, իսկ իրական աշխարհում բողոքի գործողությունների համար homo virtualicus-ների համախմբման եւ «նյութականացման» օրինակները բազմաթիվ են:

Հայաստանի վերաբերյալ մեր գնահատականները ցույց են տալիս, որ այս առումով առավել արդյունավետ եւ կառուցողական են շրջակա միջավայրի եւ մշակութային հուշարձանների պահպանությամբ զբաղվող կազմակերպությունները, ինչը, որպես կանոն, բարյացակամորեն է

ընկալվում «իրական հասարակության» կողմից: Այս համատեքստում ցանցային հանրույթների գործողությունները կարելի է ներկայացնել որպես «պոստդեմոկրատիայի» պայմաններում ժողովրդավարության պակասը կոմպենսացնելու մի յուրահատուկ մեխանիզմ: Սոցցանցերի նման գործողությունները փաստորեն ամրապնդում են ժողովրդավարական խարխլված ինստիտուտները: Կարող է տարօրինակ թվալ, բայց իշխանությունների դեմ հանդես գալով՝ սոցցանցերը «պոստդեմոկրատական պայմաններում» որոշ իմաստով ամրապնդում են «ազգային պետության» ինստիտուտները վերազգային կապիտալի հանդեպ հարաբերություններում:

### **«Երկու պետություն՝ մեկ պետությունում»**

Ազգային պետության թուլացումը պոստդեմոկրատիայի պայմաններում ենթադրում է ոչ միայն կառավարության փոխակերպում դեպի «ֆոնդային շուկա» եւ իշխանության նոր բեւեռի ձեւավորում՝ ի դեմս վերազգային ընկերությունների (ըստ Միխայիլ Դելյազինի տերմինաբանության՝ «նեոքոլոր-օլիգարխների»): Միաժամանակ տեղի է ունենում նաեւ իր իսկ՝ պետական իշխանության ճեղքում ըստ գերատեսչական շահերի հատկանիշների (կրկին ոչ առանց մեծ բիզնեսի մասնակցության):

Այս առումով ամերիկյան հասարակությունում հատուկ դիրք են զբաղեցնում ռազմական գերատեսչությունը եւ ռազմարդյունաբերական համալիրը (վերջինի սպառնալիորեն աճած դերի մասին էր մատնանշում նախագահ Դուայթ Էյզենհաուերը դեռ անցյալ դարի 50-ական թվականներին): Սուր բյուջետային դեֆիցիտի պայմաններում տրիլիոն դոլարի մոտեցող (\$700-800 մլրդ՝ հաշվի առնելով ռազմական ծախսերն ԱՖ-դանստանում եւ Իրաքում) բյուջե ունենալով՝ Պենտագոնն այսօր իր տեսակի մեջ «պետություն է պետության մեջ», իսկ Միացյալ Նահանգների ազգային շահերի մեկնաբանումը զինվորականների կողմից հաճախ տարբերվում է Սպիտակ տան հնչեցրածից: Հետաքրքրական է, որ այս հանգամանքը մի շարք կինոֆիլմերի ստեղծման շարժառիթ է հանդիսացել, որոնց սցենարում ԱՄՆ իշխանությունը զավթվում է «բազե գեներալների» կողմից: Դրանք, սովորաբար, «happy end» վերջաբան են ունենում (որպես կանոն, շնորհիվ գաղտնի ծառայությունների եւ նախագահի աշխատակազմի աշխատակիցների հնարամտության եւ անձնագր-հուղարկման), բայց, այնուամենայնիվ, տազնապալի «նստվածք» են թողնում:

Այս ամենը լոկ կինոսցենարիստների ֆանտազիան չէ, քանի որ նման հնարավորություն նշում են նաեւ ամերիկյան որոշ մեկնաբաններ (հատկապես 11.09.2001-ից հետո), ընդ որում՝ բերելով իրական փաստեր եւ միջադեպեր:

Այս համատեքստում չի կարելի բացառել այն տարբերակը, որ Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմներով ամերիկյան հասարակությունը «պարտական» է ոչ միայն Ջ.Բուշի վարչակազմի եւ «Նեոկոնների» աշխարհաքաղաքական եւ գաղափարախոսական նկատառումներին, այլ նաեւ, ռազմական ընտրանու գերատեսչական եւ կորպորատիվ շահերին, որն իր հերթին կապված է զենք արտադրողների, այսինքն՝ խոշոր բիզնեսի հետ: Այս առումով նշենք, որ ԱՄՆ հետախուզական հանրությունը եւ ԿՅԿ-ն՝ առաջին հերթին, ավելի տեղեկացված լինելով Կենտրոնական Ասիայում եւ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակի մասին, շատ ավելի քիչ խանդավառությամբ վերաբերվեցին այդ տարածաշրջաններում մասշտաբային պատերազմի հեռանկարին: Հայտնի է նաեւ, որ ԱՄՆ հատուկ ծառայությունները, որոշակիորեն նույնպես «պետություն պետության մեջ» լինելով (ամերիկյան բոլոր հատուկ ծառայությունների ընդհանուր բյուջեն գնահատվում է մոտ \$120 մլրդ), ընդհանուր առմամբ խանդոտ են վերաբերվում ամերիկյան ռազմական գերատեսչության ուժեղացմանը: Որոշ դեպքերում այդ խանդը սաստկանում է այն բանի հետ կապված, որ իր «համակրություններում» Պենտագոնին է հակվում նաեւ սեփական հետախուզություն ունեցող ԱՄՆ Պետդեպարտամենտը (բյուջեն՝ \$15 մլրդ):

ԶԼՄ որոշ հրապարակումներում տեղեկատվական արտահոսք եղավ այն մասին, որ չի բացառվում, թե հիմնական ուժը, որը Բարաք Օբամային Սպիտակ տուն բերեց, ԿՅԿ-ն է: Եթե նման մոտեցումն ընդունենք որպես աշխատանքային վարկած, ապա WikiLeaks-ի վերջին «բացահայտումները» պետք է դիտարկել իբրեւ ԱՄՆ ուժային երկու գերատեսչությունների («երկու պետություն՝ մեկ պետությունում») դիմակայության արտահայտություն: Այս առումով, չի կարելի բացառել այն տարբերակը, թե Սպիտակ տան վարչակազմը եւ նրա ղեկավարը, «պոստդեմոկրատիայի» ոգուն լրիվ համապատասխան, այնքան էլ տեղյակ չեն, թե ինչ է կատարվում սեփական հետախուզությունում եւ բանակում, այսինքն՝ «զուգահեռ պետություններում»:

Սակայն, այսպես թե այնպես, ակնհայտ է, որ գաղտնի տեղեկատվության հսկայական զանգվածի արտահոսքն անհնար է պատկերացնել առանց հզոր ուժերի աջակցության հենց ամերիկյան կառավարությունում

(լինեն դրանք հատուկ ծառայությունները կամ «homo virtualikus»-ների նոր դիսիդենտական շարժումը՝ սոցցանցային դեմոկրատիայի ոգով), ինչպես նաև չի կարելի ժխտել, որ որոշակի դեպքերում այդ արտահոսքերը նպաստում են նոր նախագահի հայեցակարգերի առաջխաղացմանը: Որոշ վերլուծաբաններ առաջ են քաշում այն վարկածը, թե WikiLeaks-ի գործողություններն ինտերնետում հրահրված են ԱՄՆ իշխանությունների կողմից եւ ծավալուն ու լավ պլանավորված տեղեկատվական գործողության մասն են կազմում: Հատկապես նշվում է, որ գաղտնի փաստաթղթերի հրապարակումը ոչ մի կերպ չի հակասում ԱՄՆ ազգային շահերին:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ *Արեստակես Սիմավորյան*

Վերջին շրջանում Վրաստանում տեղի են ունենում բացասական զարգացումներ՝ կապված մեր հայրենակիցների ազգային եւ հոգեւոր-եկեղեցական խնդիրների հետ: Հատկապես ուշագրավ են Վրաստանի հայ կաթոլիկների շրջանում տեղի ունեցող գործընթացները: Ցավոք, Վրաստանի իշխանությունները եւ Վրաց Ուղղափառ եկեղեցին հայության նկատմամբ որդեգրած դիրքորոշումներում չեն փոխում ձեռագիրը, միայն թե այս անգամ վարում են ավելի «փափուկ» քաղաքականություն:

Ս.թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած համաժողովներից մեկում, որը կրում էր «Թբիլիսիի հայ համայնք. խնդիրներ եւ հեռանկարներ» անվանումը, ելույթ էր ունեցել այդ երկրի վերինտեգրման հարցերով փոխնախարար Ելենա Թելդորաձեն: Վերջինս իր ելույթում նշել էր, որ Վրաստանը կարգավիճակ չի շնորհելու Հայ Առաքելական եկեղեցուն: Իսկ Վրաստանի փոխվարչապետ, եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Գեորգի Բարամիձեն Պրահայում հայտարարել է. «Կա՞ արդյոք մի դեպք, երբ հայկական եկեղեցին խնդիր է ունեցել իր իրավունքներն իրականացնելու գործում: Կա՞ որեւէ խնդիր. երբեք խնդիր չի եղել»: Նրա պարզաբանմամբ՝ եկեղեցու գրանցումը կստեղծի ահռելի իրավական խնդիրներ, որի կարիքը չունեն. «Ինչի՞ համար, եթե որեւէ խնդիր կա, մենք պատրաստ ենք լուծել այն, եթե խնդիր չկա, ինչո՞ւ ստեղծել: Մենք դա չենք կարող հասկանալ»:

Այս հայտարարություններին հաջորդեց Վատիկանի քննադատությունը: Մասնավորապես, Վրաստանում Վատիկանի դեսպան Կլաուդիո Գուջերոտին նշել էր, որ աշխարհի եւ ոչ մի երկրում նման պրակտիկայի չի հանդիպել, երբ պետությունն ավանդական եկեղեցուն առաջարկում է գրանցվել որպես ակումբ կամ հասարակական կազմակերպություն: Գուջերոտին նախկինում էլ արտահայտել էր այն կարծիքը, որ Վրաստանում ավանդական եկեղեցիների գրանցման հարցում իշխանությունները շեշտը դրել են նաեւ էթնիկ գործոնի վրա, ընդգծել, որ բուն խնդիրը վրացիները տեսնում են հայերի մեջ:

Վատիկանի անհանգստությունն այս հարցում պատահական չէ, քանի որ Վրաստանում կաթոլիկ եկեղեցին զուրկ է արտոնություններից եւ հավասար պայմաններում է գտնվում մնացած քրիստոնեական ուղղութ-

յունների հետ: Եթե հասկանալի պատճառներով վրացական կողմը չի գրանցում Հայ Առաքելական եկեղեցին, ապա հարցեր են առաջանում կաթոլիկ եկեղեցու համար: Հայտնի է, որ Վրաստանում կաթոլիկ եկեղեցու հետեւորդների մեծագույն մասը կազմում են հայերը, որոնք ապրում են տարբեր շրջաններում՝ Սամցխե-Ջավախքում, Բաթումում, Թբիլիսիում եւ այլուր: Այսինքն, կաթոլիկ եկեղեցին գրանցելով՝ նրանք լայն հնարավորություններ կտան նաեւ Հայ Կաթողիկե եկեղեցուն, քանի որ վերջինս ղեկավարվում է Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու կողմից: Հաշվի առնելով, որ հայերից բացի այդ երկրում բնակվում են նաեւ այլ էթնիկ խմբերի կաթոլիկներ՝ ասորիներ, լեհեր, գերմանացիներ, վրացիներ (ընդ որում՝ դրանց մեծ մասը վրացախոս հայ կաթոլիկներ են), հասկանալի է դառնում, որ այն մի կողմից ուղղված է հայերի, մյուս կողմից՝ այսպես կոչված վրացի կաթոլիկների դեմ. ի դեպ, էթնիկ վրացի կաթոլիկների դեպքում այն ավելի ագրեսիվ բնույթ է կրում՝ վերածվելով կրոնական անհանդուրժողականության: Անկասկած, չգրանցելով Հռոմի կաթոլիկ եկեղեցին՝ Վրաց Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները գործնական քայլերի են դիմում, վրացի եւ վրացախոս հայ կաթոլիկների շրջանում իսպառ վերացնելով մի դեպքում՝ էթնիկ ինքնագիտակցությունը (վրացախոս հայ կաթոլիկների մոտ), մյուսում՝ վրացի կաթոլիկ հասկացությունն ընդհանրապես:

Հարավային Կովկասի լատինաժես կաթոլիկների առաքելական կառավարիչ, եպիսկոպոս Ջուզեպե Պազոտին այս առիթով նշել է, որ կաթոլիկ փոքրամասնությունը չի ընդունվում ուղղափառ մեծամասնության կողմից: Կաթոլիկները ենթարկվում են խտրականության ինչպես դպրոցում, այնպես էլ աշխատանքի ընդունման ժամանակ: Ավելին, կաթոլիկներից շատերը մկրտվում են որպես ուղղափառներ, որպեսզի նրանց երեխաները չզրկվեն «ապագայից»: Այս միտումները հատկապես արտահայտիչ են գյուղական միջավայրում:

Ս.թ. նոյեմբերին տեղեկատվություն տարածվեց, որ Ախալցխայի Սուրբ Խաչ եկեղեցին հանձնվում է Լատինական եկեղեցուն: Նշվում է նաեւ, որ այս առիթով նամակ է հղվել եպիսկոպոս Պազոտիին: Ստացվում է, որ Ախալցխայի հայ կաթոլիկներին անցած երբեմնի հայ առաքելականների եկեղեցին տարօրինակ կերպով անցնում է Լատինական եկեղեցու տրամադրության տակ: Իսկ Հայ Կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչներին մնում է միայն ասել. «Կը խնդրուի իրենցմէ (խոսքն ուղղվում է Լատինական եկեղեցու ներկայացուցիչներին – Ա.Ս.) բացարձակ յարգանք հայկական արժեքներու նկատմամբ, ինչ կը վերաբերի խաչքարերուն եւ այնտեղ գտնուող բոլոր սուրբ նշաններուն,–

ասում է Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանը, – սա մեզ համար ամենէն կարելորն է»:

Սակայն հարկ է նշել, որ Ախալցխայում ներկայումս, բացի հայերից ու մի քանի ընտանիքից բաղկացած վրացիներից, կաթոլիկություն դավանող այլազգիներ չկան: Այսպիսով, փորձ է կատարվում հայությունից օտարել իրեն պատկանող եկեղեցին կամ այնտեղ ծիսական արարողակարգն անցկացնել այլ լեզվով: Իսկ պատմությունը ցույց է տվել, որ օտարածես արարողակարգերը բացասական հետեւանքներ են ունեցել հայության համար: Յետեւաբար, անհասկանալի է, թե ում պետք է ծառայի եկեղեցին: Ամենայն հավանականությամբ, ժամանակի ընթացքում վրացակամացվելու է նաեւ Սուրբ Խաչ եկեղեցին, եւ այն Լատինական եկեղեցուն փոխանցելը ժամանակավորապես կրքերը հանգստացնելու համար է կատարվում:

Ֆրանսիական աղբյուրներից իմանում ենք, որ Վրաց Ուղղափառ եկեղեցու միսիոներները բացահայտ խոսում են հայ կաթոլիկների վրացական ծագման մասին եւ հայտարարում, որ եկել է ժամանակը նրանց վերադարձնելու իրենց արմատներին: Այս համատեքստում, ներկայումս նման հետապնդումներն առավել հաճախակի են դարձել Քութայիս, Բաթում քաղաքներում եւ Կախեթի, Գուրիայի շրջաններում բնակվող հայերի շրջանում:

Հատկանշական է, որ Սամցխե-Ջավախքի մասին չի խոսվում, եւ սա ունի իր պատճառները, քանի որ այս տարածքում հայերն ավելի համախումբ են բնակվում, եւ ազգային բարձր ինքնագիտակցություն ունեցող հայ կաթոլիկների մեջ միսիոներները դժվար թե կարողանան հաջողությունների հասնել: Յետեւաբար, նրանք ընտրել են այնպիսի շրջաններ եւ քաղաքներ, ուր կարելի է ազատ գործել եւ հասնել շոշափելի արդյունքների: Սակայն ցավով պետք է նշել, որ «ուղղափառացման» գործընթացից զուրկ չեն մնում նաեւ հայ առաքելականները: Մասնավորապես, Նինոծմինդայի Փոկա գյուղում ակտիվ աշխատանքներ են տանում Վրաց Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները, որոնք հայկական գյուղում, ըստ իրենց, արդեն հաջողել են դավանափոխել մի քանի հայ ընտանիքների:

Այս ամենի կողքին մի նոր խնդիր է ի հայտ եկել: Ախալցխայի Սուխիս գյուղից հետ է կանչվել Մխիթարյան հայր տեր Գրիգոր վարդապետ Միքայելյանը, որին, ի դեպ, ըստ տեղեկությունների, պետք է փոխարինի ազգությամբ լեհ առաջնորդ: Ջուզահեռաբար Մոսկվայից Ռոմն է վերադառնում մեկ այլ կաթոլիկ հոգեւորական՝ Գեւորգ Նորատունկյանը: Հայր Գրիգորի հեռանալու կապակցությամբ Հայաստանի, Վրաստանի եւ

Արեւելյան Եվրոպայի հայ կաթողիկե թեմի առաջնորդ Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանը նշում է. «Եկեղեցականների մեջ որոշ դժվարութուններ ծագեցին, եւ հայր Գրիգորը ստիպված էր հեռանալ գյուղից: Անշուշտ, գյուղացիների փափագն է, որ մենք ուղարկենք հայ քահանա: Մենք չունենք բավականաչափ քահանաներ եւ դժվարանում ենք իրենց մնայուն, մշտական հովիվ ուղարկել»: Օհանյանը ժխտում է լեհ հոգեւորական ուղարկելու մասին խոսակցութունները՝ նշելով, որ իրենք ձգտում են հայ համայնքներում միայն հայ առաջնորդ ուղարկել: Այդ դեպքում հոգեւորականի խոսքերն անհասկանալի են. ի՞նչ խնդիրներ կարող են ծագել այն պարագայում, երբ ամենահրատապ խնդիրը հոգեւորականների պակասն է: Ինչ վերաբերում է լեհ հոգեւորական նշանակելուն, ապա պետք է փաստենք, որ օտարազգի հոգեւորականների ներկայութունն անընդունելի է հայերի համար: Վերջիններիս բնորոշմամբ՝ նրանք վարում են ոչ հայանպաստ քաղաքականութուն:

Չի բացառվում, որ նման շրջադարձային իրադարձութունները կապված են վերջերս շրջանառվող լուրերի հետ, որոնք վերաբերում են Հայ Կաթողիկե եկեղեցուն, թեւ դա խիստ անհավանական է թվում: Այսպես, հայկական լրատվամիջոցներից մեկում հրապարակվել էր տեղեկատվութուն, որտեղ նշվում էր, թե ավետարանչականները լրջորեն անհանգստացած են Հայաստանում կաթոլիկութան դիրքերով: Իբրեւ թե Մայր աթոռն ու իշխանութունը՝ հայ կաթոլիկ բարձրաստիճան հոգեւորականների ներգրավմամբ, սկսել են խորհրդակցութուններ, թե ինչպես հայ կաթոլիկներին գործնականում անկախացնեն Վատիկանից: Քննարկվում է հիմնականում երկու տարբերակ. 1. հայ կաթոլիկները Հայաստանում իրենք են ընտրում իրենց պատրիարքին, որը հաշվետու չէ Հռոմին, 2. Հայ Առաքելական եկեղեցու շրջանակում ստեղծվում է կաթոլիկ պատրիարքարան, որն ունի դավանաբանական ինքնավարութուն: Վերապահունով մոտենալով լրատվութան իսկութանը, ենթադրելի է, որ այս ամենը պետք է որ դրական չգնահատվեր Վատիկանի կողմից, ինչն էլ կարող էր դրդել «սեղմելու» Հայ Կաթողիկե եկեղեցու ազատատենչ ձգտումները եւ այդ պատճառով հետ կանչելու հայ քահանաներին՝ գործնական քայլերը խոչընդոտելու համար:

## **Մինե Թուղութ. «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՆՈՒՄ Է»**

Այսօր Թուրքիայում տեղի ունեցող տարատեսակ գործընթացների մեջ իրենց ուրույն եւ կարելոր տեղն են զբաղեցնում էթնիկ ինքնության խնդիրների շուրջ զարգացումները: Հենց այս հարցի համատեքստում է պետք դիտարկել վերջին տարիներին Թուրքիայում սկիզբ առած կրոնադարձության (քրիստոնեություն վերընդունելու), այդպիսով նաեւ ազգային ակունքներին վերադարձի երեւոյթը: Տարատեսակ տվյալները փաստում են, որ կրոնադարձության գործընթացը հատկապես տարածված է բռնի իսլամացված եւ ծայտյալ հայերի շրջանում: Տարբեր աղբյուրներում ի հայտ եկող նորանոր փաստերը վկայում են, որ գործընթացն ունի ոչ թե մարելու, այլ աճելու միտում:

Վերջերս թուրքական աղբյուրները բավական ակտիվ անդրադառնում են այս թեմային եւ հետաքրքիր փաստեր ներկայացնում: Թուրքական հեղինակավոր «Ռադիկալ» օրաթերթում վերջերս (20.11.2010) տպագրվել էր ուշագրավ մի հոդված, որտեղ հեղինակը՝ **Մինե Թուղութը**, թարմ տվյալներ է ներկայացնում Թուրքիայում բռնի կրոնափոխված հայերի շրջանում արձանագրվող կրոնադարձության դեպքերի մասին: Ստորեւ թուրքերենից թարգմանաբար եւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հոդվածը:

**Ռ. Մ.**

Վերջին տարիներին զգալի աճել է այն մարդկանց թիվը, ովքեր իմանալով իրենց հայկական ծագման մասին՝ փոխում են ինքնությունը: Յուսուֆ Յըլմազ (37 տարեկան, ոսկերիչ). «Մենք ծագումով Ադրյամանից ենք, սակայն մանկությանս տարիներն անցել են Այնթափում: Բոլորը մեզ գիտեին որպես քուրդ մուսուլմաններ: Հայրս ու մայրս կրոնասեր մուսուլմաններ էին: Հայրս պաշտոնյա էր, որն օրը հինգ անգամ նամազ էր անում, իսկ մայրս յոթ երեխաների խնամքով զբաղվող տանտիկին էր, որը պարտադիր պաս էր պահում: Քրդերեն էինք խոսում, սակայն թուրքերեն էլ գիտեինք: Ամառները, երբ գնում էինք Ադրյաման, թաղամասի երեխաների հետ խաղալիս, եթե հանկարծ վեճ էր ծագում, մեզ ասում էին. «Կորիր այստեղից, գյավուր, դու հայ ես»: Սկզբում չէի հասկանում: Տասներկու տարեկանում մի օր մորս

հարցրի, նա էլ պատմեց, որ իրականում քրիստոնյա ենք եղել, սակայն հետո ընդունել ենք իսլամ: Ասաց նաեւ, որ մենք ծագումով հայ ենք: Երբ սա իմացա, սկսեցի հոնգուր-հոնգուր լաց լինել, որովհետեւ մեզ դպրոցում սովորեցրել էին, որ հայերը դավաճան են: Ինչպե՞ս կլինի, որ ես էլ հայ լինեմ:

Ես տարիներ շարունակ, երկակի ինքնության պատճառով, հոգեբանական տատանման մեջ էի: Տեղափոխվեցի Ստամբուլ, փորձեցի հասկանալ Ավետարանը, սկսեցի հաճախել Յենիքափը թաղամասում գտնվող հայկական եկեղեցի: Տասնինը տարեկանում որոշեցի մկրտվել որպէս քրիստոնյա, եւ այդ պատճառով հայրս ու քեռիներս որոշ ժամանակ ինձ հետ չէին խոսում: Արդեն տասնյոթ տարի է՝ ապրում եմ որպէս քրիստոնյա: Իսլամում մի խոսք կա. «Իր ծագումը մերժողը ստոր արարած է»: Իր ակունքներին վերադարձի մասին այսպէս է պատմում Յուսուֆ Յըլմազը, սակայն նա միակ օրինակը չէ:

«Ռադիկալ»-ին բարձրաստիճան մի աղբյուր հայտնում է, որ վերջին 3-4 տարվա ընթացքում հատկապէս Ստամբուլում նկատելի թվական աճ է արձանագրվել այն հայերի շրջանում, որոնք դիմելով պատրիարքությանը եւ եկեղեցիներին՝ վերադառնում են իրենց կրոնին ու արմատներին: Աղբյուրի հավաստմամբ՝ այդպիսի մարդկանց թիվն ամեն տարի ավելանում է «հարյուրներով», եւ հավելվում է. «Նախ ուսումնասիրվում է դիմողի հայկական ծագման հարցը, որի համար մի քանի ճանապարհ կա: Օրինակ՝ բնակչության գրանցամատյանները, պատրիարքության փաստաթղթային տվյալները եւ տեղական բանավոր վկայությունները: Հատկապէս ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նմանատիպ մարդիկ ավելի շատ Արեւելյան Անատոլիայի տարածքից են»:

Չնայած հայկական տաբուն սկսել է ճեղքվել, սակայն թուրքական եւ մուսուլմանական արտաքին ինքնություն ունեցող հայերի համար իրենց իրական ինքնությունը բացահայտելը դեռեւս դժվար է: Այս մասին փոխանցում է վերոնշյալ աղբյուրը եւ պատմում մի անձի ողբերգություն, որը ցանկացել է կրոնադարձ լինել. «Ստամբուլում բնակվող 30-ամյա մի փաստաբան ցանկանում էր կրոնը փոխել: Նա բավական հայտնի ընտանիքի զավակ էր, որը գաղթել էր Կենտրոնական Անատոլիայից, որտեղ ունեցել են ընդարձակ հողատարածքներ, այգիներ: 1915-ի հայերի աքսորի ժամանակ՝ չնայած այն տարիներին եղած խիստ արգելքներին, կարողացել են կաշառք տալ եւ փախչել Ստամբուլ: Փաստաբանը մոտավորապէս հինգ տարի առաջ պատահաբար իմանում է, որ իրենք հայ են: Նրա ընտանիքն ակտիվորեն ընդգրկված է եղել ծայրահեղ

աջ քաղաքական կուսակցություններում, իսկ իրենք էլ դաստիարակվել են որպես թուրք ազգայնականներ: Երբ իմացել է, որ իրենք իրականում հայ են, «գլուխը կորցրել է», որովհետեւ փոքրուց հայերին ընկալել է որպես թշնամի եւ օտար: Մայրն ու հայրն ասել են նրան. «Մենք ստիպված էինք այդպես անել, քո բարօրության համար ենք արել»: Ամբողջ հինգ տարի իր հոգում ներքին պատերազմի մեջ է եղել: Ի վերջո որոշել է կրոնը փոխել, սակայն այս անգամ էլ նրա ընտանիքը դեմ է եղել՝ ասելով. «Մեզ վնաս կտաս»: «Մնացի երկու քարի արանքում, ես այլեւս ինձ վստահ չեմ զգում ո՛չ մուսուլմանական ինքնությանս մեջ եւ ո՛չ էլ հայկական», – ասում էր նա:

Ստամբուլի Գեդիքփաշա թաղամասի հայկական ավետարանական եկեղեցու հոգեւոր առաջնորդ Գրիգոր Աղաբալօղլուն եւս հաստատում է կրոնափոխ հայերի՝ իրենց արմատներին վերադառնալու փաստը: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ հատկապես վերջին հինգ տարում այս հարցում աճ է նկատվել: Նա ասում է. «Անատոլիայում իր արմատները կորցրած մոտավորապես մեկ միլիոն հայ կա: Այդ մարդիկ մեզ մոտ են գալիս Անատոլիայի տարբեր քաղաքներից, գյուղաքաղաքներից, գյուղերից: Տարիներ շարունակ որպես մուսուլման ապրած, սակայն իրականում հայ քրիստոնյա եղած այս մարդիկ գալիս են մեզ մոտ խորհրդակցելու: Իրենց արմատներին վերադառնալու համար դիմում են եկեղեցիներին, հոգեւորականներին: Անատոլիայում ապրողների համար այս ամենն ավելի բարդ է, քանի որ իրենց բնակության վայրը փոքր է, կան թաղամասային ճնշման եւ իրենց ազգականների կողմից մեկուսացվելու վտանգներ: Այդ պատճառով գավառներում շատերը կան, որ հրաժարվում են նման քայլի դիմել»:

Ստամբուլի Քանդիլի թաղամասի հայկական Տասներկու Առաքյալներ եկեղեցու հոգաբարձուների խորհրդի նախագահ Տիգրան Գեւորգյանն ասում է. «Մարդն իր արմատներից հեշտությամբ չի կարողանում պոկվել: Այսօր շատ ծպտյալ հայեր կան, որոնց մայրերը, տատերը ժամանակի քաղաքական պայմանների պատճառով ստիպված են եղել իրենց կրոնն ու ինքնությունը փոխել»:

Մերալ Թ. (45 տարեկան, տնային տնտեսուհի). «Հայրս իրենց տանը հայկական մշակույթով է դաստիարակվել, սակայն ե՛ւ պապս, ե՛ւ հայրս ու հորեղբայրներս դրսում ապրում էին որպես մուսուլման: Տասնհինգ տարեկանում մայրս ինձ պատմեց, որ հայ ենք, շատ զարմացա: Հայրս ասաց, որ աքսորից հետո ստիպված են եղել իսլամ ընդունել: Քսանութ տարեկանում ես ամուսնացա մի ստամբուլահայի հետ եւ որոշեցի վերադառնալ իմ արմատներին ու մկրտվեցի»:

Սելահաթթին Գյուլթեքին (45 տարեկան). «Դերսիմցի մի հայ ընտանիքից եմ եւ դաստիարակվել եմ ալեւիական մշակույթով: Մեր շրջապատում բոլորը գիտեին, որ հայ ենք: Մեր ընտանիքից ոմանք Ստամբուլ, Ֆրանսիա գաղթելուց հետո վերադարձել էին իրենց ակունքներին, կնքվել որպես քրիստոնյաներ: Ժամանակի ընթացքում հասարակության մեջ սկսեցին տաբուները կոտրվել, եւ այդ վիճակն ինձ էլ հուշեց, որ «արդեն ժամանակը եկել է»: Վեց ամիս առաջ կնքվեցի եւ անունս փոխեցի՝ դառնալով Միհրան Փրկիչ: Ես անունացած եմ եւ երկու երեխա ունեմ, որոնք սովորում են համալսարանում: Նրանք էլ իրենք թող որոշեն, թե երբ է գալու իրենց ժամանակը»:

*Թուրքերենից թարգմանեց  
Ռուբեն Սելթոնյանը*

## **ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ**

### ***Վահրամ Հովյան***

Միջին Արևելքի առանցքային պետություններից մեկի՝ Եգիպտոսի հայ համայնքի կազմում ուրույն տեղ ունեն հայ ավետարանականները: Չնայած փոքրաթվությանը՝ Եգիպտոսի հայ ավետարանական համայնքն ապրում է բավական աշխույժ կյանքով, ինչը հրավիրում է թե՛ փորձագիտական հանրության, թե՛ գիտական շրջանակների ուշադրությունը:

Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

- Քանակական առումով այն փոքրաթիվ է եւ կենտրոնացած է Ալեքսանդրիայում:

- Նրա կազմակերպչական կառույցներն իրականացնում են կանոնավոր գործունեություն, որով էլ առաջին հերթին արտահայտվում են համայնքի կազմակերպվածությունն ու ակտիվությունը:

- Համայնքի գործունեությունը չի սահմանափակվում միայն տեղական (Եգիպտոսի) մակարդակով, այլեւ երբեմն կրում է տարածաշրջանային բնույթ: Դրա արտահայտությունն են նրա ներգրավվածությունը Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության, ինչպես նաեւ տարածաշրջանային այլ ավետարանական կազմակերպությունների աշխատանքներին:

- Համայնքը սերտորեն ինտեգրված է տեղի հայ առաքելական եւ կաթողիկե համայնքներին եւ նրանց հետ կազմում է մեկ միասնական ամբողջություն՝ Եգիպտոսի համայնքը:

### **Հայ ավետարանական համայնքի ձեւավորումը**

Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը ձեւավորվել է 19-րդ դարի վերջին, հիմնականում Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ջարդերի հետեւանքով բազմաթիվ հայերի, այդ թվում եւ ավետարանականների՝ Եգիպտոս գաղթի արդյունքում: Հայոց ցեղասպանությանը պայմանավորված հայերի գաղթի նոր զանգվածային ալիքն ավելի ստվարացրեց Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը: Այս մասին վկայում է Կ.Ատանայանի «Յուշարձան հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ» աշխատությունում ամփոփված երկու փաստ.

1. Եգիպտոսի հայ բողոքականները 1936թ. դրությամբ 40 տարվա գաղթականություն էին: Գաղթականություն լինելու հանգամանքը վկայում

է հենց այն մասին, որ այդ համայնքը ձեւավորվել է հայկական կոտորածներից ու ցեղասպանությունից փրկված ավետարանականների՝ Եգիպտոս գաղթի եւ այստեղ ապաստանելու արդյունքում:

2. 1936թ. դրությամբ Եգիպտոսի հայ բողոքականների կեսը թուրքախոս էր: Եգիպտոսը, թեեւ ֆորմալ կերպով մինչեւ 1914թ. Օսմանյան կայսրության մաս էր կազմում, սակայն իրականում, սկսած դեռեւս 18-րդ դարի կեսից, օսմանյան տիրապետությունը Եգիպտոսի վրա կրում էր զուտ ձեւական կամ անվանական բնույթ: Յետեւաբար, այնտեղ, հատկապես ազգությամբ ոչ թուրք բնակչության շրջանում, թուրքերենի տարածումը չէր կարող օբյեկտիվ հիմքեր ունենալ: Ուստի, հայ ավետարանականների կեսի թուրքալեզու լինելը կարող էր պայմանավորված լինել միայն նրանով, որ նրանք բռնագաղթած լինեին Օսմանյան կայսրության այլ շրջաններից:

Եգիպտոսի հայ ավետարանականների թվաքանակը 1936թ. դրությամբ կազմում էր 800 մարդ: Նրանք կենտրոնացած էին Եգիպտոսի ավանդական հայաշատ քաղաքներում՝ Կահիրեում (500 մարդ) եւ Ալեքսանդրիայում՝ (300 մարդ):

Սկսած 20-րդ դարի կեսերից՝ Եգիպտահայության մեջ նկատվում է արտագաղթի միտում դեպի Խորհրդային Չայաստան, Արեւմտյան Եվրոպայի երկրներ, ԱՄՆ, Կանադա եւ Ավստրալիա, որն ավելի ուժգնանում է 1952թ. ապստամբությունից եւ նախագահ Գամալ Աբդ ալ Նասերի իշխանության գալուց հետո: Աստիճանաբար զանգվածային բնույթ ստացող արտագաղթը, ինչը բնորոշ է նաեւ Եգիպտաբնակ քրիստոնյա այլ խմբերին, բացասական ազդեցություն է թողնում նաեւ տեղի հայ ավետարանական համայնքի վրա: Արդյունքում՝ Կահիրեի հայ ավետարանական համայնքը գրեթե լիովին սպառվում է: Այդ մասին է վկայում այն, որ դադարում է գործել Կահիրեի Չայ Ավետարանական եկեղեցին:

Ներկայումս Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը սահմանափակվում է միայն Ալեքսանդրիայի շրջանակներում, որտեղ գործում է դեռեւս 1920-ական թթ. հիմնված Չայ Ավետարանական եկեղեցին: Չամայնքի ներկայիս թվաքանակի վերաբերյալ կոնկրետ տվյալներ չկան: Կան մոտավոր տեղեկություններ, որոնք կարող են հիմք լինել որոշ ենթադրությունների համար: Այսպես, համաձայն Ա.Չակոբյանի՝ ներկայումս Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը բաղկացած է ավելի քան 300 ընտանիքից: Նրանց թվաքանակի մասին ենթադրություններ անելու հնարավորություն կարող է տալ նաեւ Ալեքսանդրիայի Չայ Ավետարանական եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի աշակերտների թիվը: Կրթօջախի սաների թիվը 15-18 է:

## Կազմակերպչական կառույցները

Եգիպտոսի Չայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցներն աչքի չեն ընկնում քանակական առատությամբ եւ տեսակային բազմազանությամբ: Տեսակային առումով դրանք բաժանվում են երկու մասի՝ եկեղեցական եւ կրթական, որոնցից առկա են մեկական հատ:

- *Եկեղեցական* միակ հաստատությունը Ալեքսանդրիայի Չայ Ավետարանական եկեղեցին է: Այն հիմնվել է 1920-ական թթ.: Եկեղեցին ներկայումս գլխավորում է քարոզիչ Սամվել Խունգանյանը, որն էլ, ըստ էության, Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի առաջնորդն է: Առկա է հոգեւոր գործիչների պակասի խնդիր: 1990-ից ի վեր, երբ վախճանվեց վերջին պատվելին՝ Վահրամ Խունգանյանը, եկեղեցին պատվելի չունի: Այդ պատճառով պաշտամունքները ղեկավարվում են եկեղեցու վարչության անդամների կողմից (Սամվել Խունգանյան, Չակոբ Կանիմյան):

- *Կրթական* միակ հաստատությունը Ալեքսանդրիայի Չայ Ավետարանական եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցն է: Դպրոցը ղեկավարում է տիկին Լիմի Խունգանյանը, որը Լիդիա Խունգանյանի հետ միասին զբաղվում է կրթության եւ դաստիարակության գործով:

Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցների քանակական սահմանափակությունը, ինչպես նաեւ տեսակային աղքատությունը կարելի է բացատրել հետեւյալ գործոններով.

1. *Համայնքի թվաքանակի սահմանափակությունը:* Եգիպտոսի հայ ավետարանականները քանակական առումով էապես գիջում են տարածաշրջանային այլ երկրների (Լիբանան, Սիրիա, Իրան) հայ ավետարանականներին: Քանակական սահմանափակությամբ էլ պայմանավորված է տարատեսակ կառույցների լայն ցանց հիմնելու անհրաժեշտության բացակայությունը:

2. *Եգիպտոսի աշխարհիկ նկարագիրը:* Եգիպտոսն առավելապես աշխարհիկ պետություն է: Կրոնական համայնքները կամ կառույցները զբաղվում են հիմնականում հոգեւոր-եկեղեցական խնդիրներով՝ այլ ոլորտները թողնելով աշխարհիկ կառույցներին: Այս առումով ավելորդ չէ հիշատակել, որ ընդհանրապես Եգիպտոսի հայկական կրթական, մշակութային եւ այլ կառույցները հիմնականում գտնվում են աշխարհիկ ոլորտում՝ դուրս լինելով հոգեւոր հաստատությունների տնօրինությունից:

3. *Խտրական վերաբերմունքը:* Չնայած Եգիպտոսն իր սոցիալ-քաղաքական միջավայրով ավելի է համապատասխանում արեւմտաեվրոպական աշխարհիկ հասարակություններին, այնուամենայնիվ, որպես

մուսուլմանական երկիր լիովին գերծ չէ մուսուլմանական հասարակությունների բնորոշ որոշակի անհանդուրժողական վերաբերմունքից այլակրոնների եւ, մասնավորապես՝ քրիստոնյաների նկատմամբ: Գամալ Աբդ ալ Նասերի իշխանության գալուց հետո քրիստոնյաների նկատմամբ խտրական վերաբերմունքն ավելի հստակ ուրվագծվեց թե՛ հասարակական եւ թե՛ պետական մակարդակներում: Մասնավորապես, եթե մուսուլմաններն ազատորեն իրավունք ունեն կառուցելու պաշտամունքային շինություններ, ապա քրիստոնյաները եկեղեցիներ կառուցելու համար պարտադիր պետք է ստանան Եգիպտոսի բարձրագույն իշխանությունների պաշտոնական թույլտվությունը:

### **Գործունեության մակարդակները**

Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի գործունեությունը դրսևւորվում է երկու մակարդակով՝ տեղական եւ տարածաշրջանային:

1. *Տեղական* մակարդակով համայնքը գործունեություն է ծավալում Եգիպտոսի սահմաններում: Այդ գործունեությունն իր հերթին բաժանվում է երկու ենթամակարդակների՝ ազգային եւ միջազգային:

- *Ազգային* ենթամակարդակով Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի ակտիվ գործունեությունը դրսևւորվում է համայնքային կառույցների կանոնավոր գործառնությանը՝ ինչպես հայ ավետարանականների, այնպես էլ ողջ եգիպտահայության շրջանակներում:

Հայ ավետարանականների շրջանում կանոնավոր գործունեություն են իրականացնում Ալեքսանդրիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցները: Չնայած բոլոր դժվարություններին, որոնց թվում առաջնային նշանակություն ունի համայնքի թվաքանակի նվազումը, Ալեքսանդրիայի Հայ Ավետարանական եկեղեցուն, ինչպես վկայում է եկեղեցու վարչության անդամ Հակոբ Կանինյանը, ամեն կիրակի տեղի է ունենում պաշտամունք: Կանոնավոր գործում է նաեւ եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցը: Ալեքսանդրիայի համայնքի կանոնավոր գործունեության եւս մեկ դրսևւորում են ամեն շաբաթ անցկացվող տիկնանց եւ օրիորդաց Սուրբ գրքի սերտողությունները՝ Լիդիա Խունգանյանի ղեկավարությամբ:

Ինչ վերաբերում է տեղի ողջ հայ համայնքի շրջանում գործունեությանը, ապա այն ակնառու է հատկապես կրթական բնագավառում, ինչն ընդհանրապես ավանդաբար բնորոշ է եղել Միջին Արեւելքի հայ ավետարանական համայնքներին: Հայ ավետարանական ուսումնական հաստատությունները մշտապես բաց են եղել այլ հարանվանությունների ներկայացուցիչ երեխաների համար՝ կրթություն տալով նաեւ հայ առա-

քելական եւ կաթոլիկ երեխաներին: Այս առումով կարելի է ասել, որ հայ ավետարանական կրթական հաստատությունները ոչ թե հարանվանական, այլ ազգային բնույթ ունեն: Այսպես, համաձայն Մերձավոր Արեւելքի հայ ավետարանական կիրակնօրյա վարժարանների տեղեկագրի (1947թ. հոկտեմբեր – 1948թ. ապրիլ)՝ Մերձավոր Արեւելքի երկրների, այդ թվում նաեւ Եգիպտոսի բոլոր հայ ավետարանական կիրակնօրյա վարժարանների ընդհանուր աշակերտության միայն 54%-ն էին կազմում ավետարանական երեխաները: 41%-ը կազմում էին հայ առաքելականները, մնացած 5%-ը՝ այլք: Ներկայումս, ինչպես վկայում է Յ.Կանիմյանը, Ալեքսանդրիայի Հայ Ավետարանական եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի ավետարանական աշակերտների կողքին ուսանում են նաեւ Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդների զավակներ:

- *Միջազգային* ենթամակարդակով Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի գործունեությունը դրսեւորվում է հիմնականում Եգիպտոսի այլ ավետարանական հանրույթների հետ համագործակցության ձեւով: Մասնավորապես, Եգիպտոսի հայ ավետարանական համայնքն անդամակցում է Եգիպտոսի Ավետարանական եկեղեցիների համագործակցությանը:

2. *Տարածաշրջանային* մակարդակով Եգիպտոսի հայ ավետարանական համայնքի գործունեությունը դուրս է գալիս Եգիպտոսի սահմաններից եւ տարածվում միջինարեւելյան տարածաշրջանի վրա: Այս մակարդակում նույնպես այն դրսեւորվում է ազգային եւ միջազգային ենթամակարդակներով:

- *Ազգային* ենթամակարդակով Եգիպտոսի հայ ավետարանական համայնքն ավանդաբար ակտիվ գործունեություն է ծավալել Մերձավոր Արեւելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության շրջանակներում, որի անդամ է հանդիսանում: Մասնավորապես, համայնքի ներկայացուցիչները կանոնավորապես մասնակցել եւ մասնակցում են Մերձավոր Արեւելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության աշխատանքներին:

- *Միջազգային* ենթամակարդակով Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը գործակցում է Միջին Արեւելքի այլ ավետարանական համայնքների հետ: Նման ենթադրության տեղիք է տալիս, օրինակ, եգիպտահայ ավետարանականների մասնակցությունը 2005թ. հոկտեմբերին Ամանում (Հորդանան) Միջին Արեւելքի Ավետարանական եկեղեցիների միության կազմակերպած միջազգային կոնֆերանսին:

## **ՆԱՏՕ-Ի ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԲԵՆԻՃԱՆԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

### **Ռազմավարության հիմնական տարրերը**

2010թ. նոյեմբերին Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում ընդունվեց այս կազմակերպության նոր ռազմավարությունը, որը փոխարինեց 1999թ. ընդունված փաստաթղթին: Նոր ռազմավարությունը ՆԱՏՕ-ն ընդունեց զգալիորեն փոխված իրավիճակում: 1999թ. դաշինքում զգալի էր խանդավառությունը ԽՍՀՄ-ի փլուզման, «սառը պատերազմում» տարած հաղթանակի եւ ՆԱՏՕ-ի ընդլայնման հետ կապված: Կազմակերպությանը փաստացի հաջողվել էր կոտրել Ռուսաստանի դիմադրությունը եւ ստանալ վերջինիս լուռ համաձայնությունը նախկին սոցիալիստական բլոկի պետությունների՝ ՆԱՏՕ-ին անդամակցության հարցում: Դաշինքի ներսում հստակ ցանկություն կար դուրս գալ եվրատլանտյան շրջանակներից եւ ՆԱՏՕ-ն վերածել համաշխարհային ընդգրկում ունեցող կազմակերպության, որի ռազմավարական շահերի տարածքն ընդգրկում էր գրեթե ողջ երկրագունդը:

Սակայն անցած տասնամյակը ՆԱՏՕ-ի համար սթափեցնող նշանակություն ունեցավ: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ը փաստացի հրաժարվեց գործել դաշինքի շրջանակներում՝ Աֆղանստան ներխուժումն իրականացնելով երկկողմ բանակցությունների արդյունքում ձեւավորված կոալիցիայի միջոցով (թեեւ 2003թ. Աֆղանստանում իրականացվող օպերացիան վերադարձվեց ՆԱՏՕ-ի շրջանակ, սակայն իրավիճակը դրանից էական փոփոխություններ չկրեց): ՆԱՏՕ-ին հասցված հաջորդ հարվածը ԱՄՆ ներխուժումն էր Իրաք, ինչը լուրջ տարածայնություններ առաջ բերեց դաշինքի անդամ պետությունների, առաջին հերթին ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջեւ: ՆԱՏՕ-ի հավակնություններին լուրջ հարված հասցրին նաեւ 2008թ. Վրաստանի իրադարձությունները, երբ կազմակերպությունը չկարողացավ որեւէ գործնական քայլ իրականացնել իրադրությանը միջամտելու համար: Միաժամանակ, ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնման ծրագրերը, առաջին հերթին՝ Վրաստանի եւ Ուկրաինայի հնարավոր անդամակցությունը կազմակերպությանը, ծայրահեղորեն սրեցին Ռուսաստան–ՆԱՏՕ հարաբերությունները, ինչը մի շարք փորձագետների հիմք տվեց խոսել Ռուսաստան–Արեւմուտք հա-

րաբերություններում նոր «սառը պատերազմի» հնարավորության մասին:

Վերոհիշյալ իրադարձությունների վերագնահատումն իր ազդեցությունն է թողել նոր ռազմավարության վրա: Այստեղ բերված ձեւակերպումները շատ ավելի կոնկրետ են, իսկ նպատակները՝ ավելի հստակ: Ռազմավարության կարելորագույն շեշտադրումներից մեկը դաշինքի անդամ պետությունների անվտանգության ապահովման գործում ԱՄՆ ռազմավարական միջուկային զինանոցի կարելորության շեշտադրումն է, ինչն այն բանի վկայությունն է, որ չնայած Բարաք Օբամայի՝ աշխարհն առանց միջուկային զենքի տեսնելու ցանկությանը, միջուկային զինանոցը դեռեւս երկար ժամանակ կարելորագույն դերակատարություն կունենա միջազգային հարաբերություններում:

Ռազմավարության երկրորդ կարելոր նորույթը կիբերանվտանգությանն առնչվող խնդիրներին զգալի ուշադրության հատկացումն է: Նշվում է, որ կիբերհարձակումներից պաշտպանության խնդիրներին մեծ տեղ է հատկացվելու ՆԱՏՕ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում: Դաշինքը կարելուրում է նաեւ էներգետիկ անվտանգությունը, ընդ որում՝ առանձնահատուկ շեշտվում է այն գաղափարը, որ ՆԱՏՕ-ն պետք է ապահովի ոչ միայն էներգետիկ ենթակառուցվածքների, այլեւ տարանցման ուղիների անվտանգությունը: Նոր ռազմավարությունը շատ ավելի զուսպ է արտահայտվում դաշինքի ընդլայնման հնարավորության մասին՝ բավարարվելով «ՆԱՏՕ-ի դռները բաց են եվրոպական բոլոր ժողովրդավարությունների առջեւ» անորոշ արտահայտությամբ: Միաժամանակ շեշտվում է միջազգային համագործակցության կարելորությունը, այդ թվում ՆԱՏՕ–ՄԱԿ, ՆԱՏՕ–Եվրամիության տրամաչափում:

Նոր ռազմավարությունը զգալի տեղ է հատկացնում նաեւ հակահրթիռային պաշտպանությանը, որպես դաշինքի անդամ պետությունների անվտանգության ապահովման կարելոր տարրի:

## **ՆԱՏՕ – Ռուսաստան հարաբերությունները**

Լիսաբոնյան գագաթաժողովում կարելոր տեղ էին զբաղեցնում ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերությունները, որոնք բավական լարված էին վերջին երկու տարիների ընթացքում: ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունում հստակ նշվում է, որ Ռուսաստանի հետ համագործակցությունը ռազմավարական կարելորություն ունի դաշինքի համար եւ նպաստում է խաղաղությանը եւ կայունությանը: Շեշտվում է, որ ՆԱՏՕ-ն սպառնալիք չի ներկայացնում Ռուսաստանի համար: Համագործակցության հնարավոր

ոլորտների թվում են հակահրթիռային պաշտպանությունը, ահաբեկչության եւ թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը: Միաժամանակ ՆԱՏՕ-ն առաջարկում է Ռուսաստանին քննարկել Եվրոպայում տեղակայված տակտիկական միջուկային զենքը ՆԱՏՕ-ի սահմաններից հեռացնելու հնարավորության խնդիրը, ինչը, իրականություն դառնալու դեպքում, կարող է որոշակի լարվածություն առաջացնել ռուս-չինական հարաբերություններում, քանի որ տակտիկական միջուկային զենքի ցանկացած վերատեղակայում դրանք ավելի կմոտեցնի Չինաստանի սահմանին:

Լիսաբոնում 2008թ. իրադարձություններից հետո առաջին անգամ անցկացվեց նաեւ ՆԱՏՕ–Ռուսաստան խորհրդի նիստ, որին մասնակցեց Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդեւը: Նիստի արդյունքում ընդունված համատեղ հայտարարության մեջ նշվում է, որ Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի անվտանգությունը կապակցված է, եւ կողմերը ձգտելու են ռազմավարական համագործակցության, որը կհենվի փոխադարձ վստահության, թափանցիկության եւ կանխատեսելիության վրա: ՆԱՏՕ-ն եւ Ռուսաստանը վերահաստատում են Եվրոպայում սովորական սպառազինությունների վերահսկողության ռեժիմի վերականգնման կարեւորությունը, ինչպես նաեւ համաձայնվում են քննարկումներ սկսել հակահրթիռային պաշտպանության համատեղ համակարգի ձեւավորման շուրջ:

Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդեւը նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ Ռուսաստան–ՆԱՏՕ հարաբերությունները թեւակոխել են բարելավման փուլ, ի տարբերություն 21-րդ դարի առաջին տասնամյակի, որը բնորոշվում էր հարաբերությունների լարվածությամբ: Մեդվեդեւն անդրադարձավ նաեւ Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի ձեւավորման եւ այդ գործընթացում Ռուսաստանի հնարավոր մասնակցության խնդրին: Ռուսաստանի նախագահը հստակ հայտարարեց, որ հակահրթիռային պաշտպանությունն ի վիճակի է կատարել կայունության ապահովման գործառույթ, եթե ապահովի բոլոր պետությունների անվտանգությունը, այլ ոչ թե տարածվի Եվրոպայի միայն մի մասի վրա: Գոհունակություն հայտնելով ամերիկյան նոր վարչակազմի դիրքորոշման վերաբերյալ՝ հրաժարվել Չեխիայում եւ Լեհաստանում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման ծրագրից, Մեդվեդեւը շեշտեց, որ փուլային տարբերակով Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգ ստեղծելու Օբամայի վարչակազմի ծրագիրը, որը ենթադրում է ողջ համակարգի գործարկում մինչեւ 2020թ., եւս կարող է

խնդիրներ ստեղծել Ռուսաստանի համար: Եթե նոր համակարգը խախտի Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առկա միջուկային հավասարակշռությունը, ապա դա միանշանակ կարող է հանգեցնել սպառազինությունների նոր մրցավազքի: Անդրադառնալով Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի ձեւավորման գործընթացին Ռուսաստանի հնարավոր մասնակցությանը՝ Մեդվեդեւը հայտարարեց, որ այդ մասնակցությունը պետք է հենվի իրավահավասարության սկզբունքի վրա: Ռուսաստանը պետք է մասնակցի համակարգի ձեւավորման բոլոր փուլերին կամ կիրառարկի այդ գործընթացին մասնակցելուց:

Մեդվեդեւն անդրադարձավ նաեւ ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի միջեւ առկա տարածայնություններին՝ նշելով, որ դրանցում հիմնականը Վրաստանում 2008թ. տեղի ունեցած իրադարձություններին տրվող գնահատականներն են: Սակայն կողմերը պայմանավորվել են շարունակել քննարկումներն այդ եւ մի շարք այլ չկարգավորված խնդիրների շուրջ, որոնք չպետք է խոչընդոտ հանդիսանան այլ հարցերում համագործակցության շարունակման համար:

Ռուսաստան – ՆԱՏՕ հարաբերություններին Մեդվեդեւն անդրադարձավ նաեւ Դաշնային խորհրդին ուղղված իր տարեկան ուղերձում: Շեշտելով Ռուսաստանի զինված ուժերի արդիականացման, նոր սպառազինությունների ձեռքբերման կարելուրությունը՝ Մեդվեդեւը հայտարարեց, որ Ռուսաստանը շարունակելու է միջազգային համագործակցությունն անվտանգության ոլորտում, այդ թվում՝ հակահրթիռային պաշտպանության եվրոպական նոր համակարգի ձեւավորման համատեքստում: Ռուսաստանի նախագահը եւս մեկ անգամ շեշտեց, որ պաշտոնական Կրեմլը համաձայն է մասնակցել նոր համակարգի ձեւավորմանը, որը կմիավորի Ռուսաստանի եւ դաշինքի հնարավորություններն ու կպաշտպանի Եվրոպայի բոլոր պետություններին հնարավոր հրթիռային հարձակումներից: Միաժամանակ Մեդվեդեւը նշեց, որ առաջիկա տասնամյակի ընթացքում առկա է հստակ այլընտրանք. կամ Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն կկարողանան համաձայնության հասնել Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգում Ռուսաստանի ամբողջական եւ իրավահավասար մասնակցության շուրջ, կամ Ռուսաստանը միջուկային հավասարակշռության պահպանման նպատակով հարկադրված կլինի Եվրոպայում հարվածային նոր ուժերի տեղակայման որոշում ընդունել:

Մեդվեդեւը երկկողմ հարաբերություններին անդրադարձավ նաեւ Լեհաստան կատարած այցի նախօրյակին լեհական զանգվածային

լրատվամիջոցներին տրված հարցազրույցում: Շեշտելով Լիսաբոնի գազաթափողովի կարելորությունը ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերություններում նոր փուլի մեկնարկի համատեքստում, Ռուսաստանի նախագահը նշեց, որ այն իրոք կարող է պատմական լինել, եթե կողմերին հաջողվի իրականացնել գազաթափողովի ընթացքում քննարկված բոլոր ծրագրերը: Մեդվեդեւը ՆԱՏՕ–Ռուսաստան հարաբերություններում շեշտեց Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի ձեւավորմանը Ռուսաստանի մասնակցության կարելորությունը: Նա նշեց, որ ԱՄՆ նախագահի հետ բանակցություններում հայտարարել է, որ այդ խնդիրն էական ազդեցություն կունենա ոչ միայն նախագահների քաղաքական հեռանկարի, այլև առաջիկա տասնամյակի քաղաքական զարգացումների վրա: Մեդվեդեւը կրկին պնդեց, որ եթե Ռուսաստանն իրավահավասար մասնակցություն չունենա նոր համակարգի ձեւավորմանը, ապա հարկադրված կլինի համապատասխան միջոցներ ձեռնարկել միջուկային հավասարակշռության ապահովման նպատակով:

### **ՆԱՏՕ – Աֆղանստան**

Լիսաբոնի գազաթափողովում քննարկված կարելոր հարցերի թվում էր նաև Աֆղանստանում ստեղծված իրավիճակը: Քննարկումների արդյունքում ընդունվեցին երկու հռչակագրեր: Առաջինը ՆԱՏՕ-ի և Աֆղանստանի կառավարության միջև ստորագրված փաստաթուղթն է, որտեղ կողմերը վերահաստատում են Աֆղանստանում կայունության հաստատման ռազմավարական նշանակությունը և շեշտում համագործակցության շարունակման կարելորությունը՝ ահաբեկչության, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում: Միաժամանակ, ՆԱՏՕ-ն պարտավորվում է հարգել Աֆղանստանի ինքնիշխանությունը՝ երկրի տարածքում իրականացվող գործողությունների ընթացքում: Երկրորդ հռչակագիրը ստորագրվել է ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ Աֆղանստանում ընթացող գործողության մասնակից պետությունների կողմից: Հռչակագիրն առաջին անգամ հստակ ժամկետ է սահմանում ողջ երկրի տարածքում անվտանգության ապահովումն աֆղանական ուժերին հանձնելու խնդրի լուծման համար: Գործընթացը մեկնարկելու է 2011թ. և ավարտվելու է մինչև 2014թ. վերջը: Սակայն հաշվի առնելով Աֆղանստանում աստիճանաբար վատթարացող իրավիճակը՝ մի շարք փորձագետներ և վերլուծաբաններ գտնում են, որ նշված ժամկետներն իրատեսական չեն:

Անփոփելով կարելի է նշել, որ ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունը, նախորդի համեմատ, պակաս հավակնոտ է, որտեղ շեշտվում է միջազգային այլ կառույցների (ՄԱԿ, Եվրամիություն) հետ համագործակցության անհրաժեշտությունը գլոբալ հիմնախնդիրների լուծման գործում: Զգալի ուշադրություն է հատկացվում նաեւ Ռուսաստանի հետ գործընկերային հարաբերությունների հաստատման խնդրին:

Միեւնույն ժամանակ, Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի տեղակայման հարցում Ռուսաստան–ՆԱՏՕ բանակցությունների հնարավոր ձախողումը կարող է էականորեն սրել երկկողմ հարաբերությունները եւ կանգնեցնել վերջին մեկ-երկու տարիների ընթացքում նկատվող առաջընթացը:

## ԹՈՒՐՔԻԱ – ՆԱՏՕ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Սուրեն Սարյան*

Այս տարվա նոյեմբերին Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովը եւ դրան հաջորդած զարգացումներն առանձնահատուկ նշանակություն ունեցան Թուրքիայի համար՝ Արեւմուտքի հետ հարաբերություններում իր դերակատարությունը ճշտելու տեսանկյունից: Թուրք քաղաքագետներն այդ իրադարձությունները բնորոշեցին որպես Արեւմուտքի հետ հարաբերություններում Թուրքիայի համար շրջադարձային կետ, որն իբրեւ համարժեք է 1950թ. Ա.Մենդերեսի կառավարության՝ Կորեական պատերազմին թուրքական զորքեր ուղարկելու որոշմանը. հենց այդ որոշումից հետո՝ 1952 թվականին հնարավոր դարձավ Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին:

Շուրջ չորս տասնամյակ այս երկիրը համարվել է ՆԱՏՕ-ի հարավային պատվարը խորհրդային էքսպանսիայի դեմ: «Սառը պատերազմի» ժամանակաշրջանի ողջ ընթացքում Թուրքիան իր անվտանգության ապահովումը վստահել էր ՆԱՏՕ-ին: ԽՍՀՄ փլուզումից հետո իրավիճակը փոխվեց:

Վերջերս արեւմտյան փորձագետները կարծիք են հնչեցրել, թե ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ Թուրքիայի կապն աստիճանաբար թուլանում է, ինչը կրում է գաղափարախոսական բնույթ: Զամաձայն Ահմեդ Դավութօղլուի առաջ քաշած «Ռազմավարական խորություն» հայեցակարգի, Թուրքիան պետք է միակողմանիորեն կախված չլինի ՆԱՏՕ-ից եւ ԱՄՆ-ից՝ կապեր զարգացնելով Ռուսաստանի, Իրանի եւ մահմեդական աշխարհի հետ:

Վերջին ժամանակաշրջանում Թուրքիան էապես ակտիվացրել է ռազմական կապերը Ռուսաստանի եւ Չինաստանի հետ: Մասնավորապես, ներկայում Մոսկվայի հետ քննարկվում է S-300 հրթիռների գնման հարցը, իսկ Չինաստանի հետ վերջերս անցկացվեցին համատեղ զորավարժություններ: Ավելին, այս տարի թույլ չտալով Իսրայելին իր տարածքում ՆԱՏՕ-ի զորավարժություններին մասնակցել, Անկարան անցկացրեց համատեղ զինավարժություններ Սիրիայի հետ:

Անշուշտ, այս ամենը չի նշանակում Անկարայի ռազմաքաղաքական կողմնորոշման փոփոխություն. այդ քայլերը պետք է դիտել ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական պետություններին ուղղված ազդանշան՝

նրանց համար Թուրքիայի ռազմավարական նշանակությունը կրկին շեշտելու եւ համապատասխան գիջումներ կորգելու նպատակով:

Այսպես, թուրքական կառավարությունը չձեռնարկեց որեւէ իրական քայլ, որը կարող էր խափանել ՆԱՏՕ-ի ծրագրերի իրականացումը, ներառյալ՝ հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) համակարգի տեղակայումը Հարավային Եվրոպայում: Հայտնի է, որ ԱՄՆ-ը դիմել էր թուրքական կառավարությանը՝ ՀՀՊ համակարգի տարրերը երկրի տարածքում տեղակայելու առաջարկով: Այս ծրագիրը թուրք որոշ փորձագետների կողմից համարվում է որպես ծուղակ, որով Թուրքիային փորձում են հակադրել հարեւաններին: Սակայն այլ փորձագետներ նշում էին, որ Անկարայի կողմից այդ ծրագրին մասնակցելու մերժումը կբերի Արեւմուտքից Թուրքիայի վնասակար մեկուսացմանը:

Լիսաբոնի գազաթափողովում ունեցած իր ելույթում Թուրքիայի նախագահ Գյուլը նշեց, որ ՆԱՏՕ-ի ՀՀՊ նոր համակարգը պետք է ընդգրկի դաշինքի բոլոր անդամ երկրների տարածքը եւ ընդունելի լինի բոլորի կողմից: Այսինքն՝ Թուրքիայի դիրքորոշումն այս հարցում հանգում էր նրան, որ պետք է լինի մեխանիզմ, որը թույլ կտա անհրաժեշտ պահին օգտվել վետոյի իրավունքից:

Միեւնույն ժամանակ, շեշտում էր Գյուլը, այն չի կարող ուղղված լինել որեւէ կոնկրետ պետության դեմ: Թուրքական իշխող վերնախավն ակնհայտորեն չէր ցանկանում, որպեսզի ամերիկացիների կողմից առաջարկվող ՀՀՊ ծրագիրն ուղղվի Ռուսաստանի կամ Իրանի դեմ, որոնց անունները վերջերս հանվեցին Թուրքիայի ազգային անվտանգության հայեցակարգում նշվող հավանական հակառակորդների ցանկից: Ա.Դավութօղլուն այդպես էլ հայտարարեց, որ Թուրքիան այլեւս թույլ չի տա, որպեսզի նրան դարձնեն «մերձակատային երկիր», ինչպես դա եղել է «սառը պատերազմի» դարաշրջանում. «Մենք չունենք վտանգի զգացում, որը կարող է բխել մեր հարակից տարածաշրջաններից, ներառյալ՝ Իրանից, Ռուսաստանից, Սիրիայից»: Մինչդեռ ԱՄՆ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները նշում էին, որ Թուրքիան գտնվում է առաջնային գծում՝ Իրանի հետ հավանական հակամարտության դեպքում:

Ի վերջո, Անկարային հաջողվեց իր համաձայնությունը պայմանավորել Իրանի (որպես հավանական թիրախի կամ սպառնալիքի աղբյուրի) անունը Լիսաբոնի գազաթափողովի որոշումներից հանելու պարագայով: Չնայած Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզին ուղղակի նշեց, որ ծրագիրն ուղղված է լինելու Եվրոպան իրանական հրթիռներից պաշտպանելու նպատակին: Նաեւ բալկանյան պետությունները՝ Ռումինիան եւ

Բուլղարիան, համաձայնեցին տրամադրել իրենց տարածքները ՀՀՊ կայանների համար՝ դիտարկելով Իրանը որպես հիմնական հակառակորդ:

Գյուլն իր ելույթում շեշտեց, որ ՆԱՏՕ-ն պաշտպանական դաշինք է եւ չի կարող գործել որեւէ երկրի դեմ: ՀՀՊ համակարգի ծավալման հիմնական նպատակը, ըստ Անկարայի, պետք է լինեն ՆԱՏՕ-ի դաշնակիցների անվտանգության ապահովումն ու պաշտպանությունն այն ռիսկերից եւ վտանգներից, որոնք իր հետ բերում է հեռահար հրթիռների գլոբալ տարածումը: Գյուլն նաեւ շեշտեց, որ ՆԱՏՕ-ի շրջանակներում որոշումներ կայացնելիս Թուրքիան առաջնորդվում է առաջին հերթին սեփական շահերով, հետո միայն դաշնակիցների հետ համերաշխության սկզբունքով:

Լիսաբոնի գազաթափողովին մասնակցող թուրքական պատվիրակությունը գոհունակություն հայտնեց այն փաստի կապակցությամբ, որ Թուրքիայի մտահոգությունները տեղ գտան ՆԱՏՕ-ի նոր Ռազմավարական հայեցակարգում: Թուրքիան համարում է, որ Իրանի անունը չհիշատակելը՝ որպես ՆԱՏՕ-ի հավանական հակառակորդ, իր դիվանագիտության հաջողությունն է:

Ավելին, թուրք ղեկավարները նույնիսկ հայտարարում էին, որ հենց Թուրքիայի դիրքորոշումը թույլ տվեց պահպանել ՆԱՏՕ-ի իմիջը: Սակայն հասկանալի է, որ թուրքական առաջարկները դաշինքի ղեկավարության համար որեւէ արտակարգ բնույթ չէին կրում: Ամեն դեպքում, Անկարան լիարժեքորեն օգտագործեց Լիսաբոնի գազաթափողվը Արեւմուտքի եւ Իրանի հետ իր հարաբերությունները գովազդելու համար:

Սակայն իրական քաղաքականության դաշտում ամեն ինչ մնաց այնպես, ինչպես կար: Չնայած Էրդողանի պնդումներին, որ Թուրքիայի տարածքում ՀՀՊ համակարգի ղեկավարումը պետք է հանձնել Անկարայի ձեռքը, ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները հենց սկզբից հստակեցրին, որ նման համակարգերի ղեկավարումը դաշինքում իրականացնում է նրա հրամանատարությունը, այլ ոչ թե առանձին մի երկիր:

Ինչեւէ, Թուրքիայի ղերակատարումը ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության եւ այլ ծրագրերում մնում է բավական անորոշ: Թեեւ Թուրքիայի անդամությունը դաշինքին հարցականի տակ չի դրվում, սակայն անհայտ է, թե արդյոք Թուրքիան հետագայում սաբոտաժի չի ենթարկի ՆԱՏՕ-ն, ինչպես ժամանակին դա անում էր գոլիստական Ֆրանսիան:

ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում Թուրքիային հուզող մյուս հարցը ՆԱՏՕ-ԵՄ ռազմական համագործակցությունն է: Դրան այսօր խոչընդոտում է թուրքական դիրքորոշումը Կիպրոսի խնդրի կարգավոր-

ման հարցում: Հայտնի է, որ ԵՄ-ի կողմից Կիպրոսին՝ որպես իր անդամին ցուցաբերվող աջակցությունը դառնում է լուրջ արգելք ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործում: Մյուս կողմից, Անկարան խոչընդոտում է ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի քաղաքականության ու անվտանգության հարցերով կոմիտեի ներկայացուցիչների միջեւ հանդիպումների անցկացումը՝ պնդելով, որ Կիպրոսը չի հանդիսանում ՆԱՏՕ-ի անդամ կամ գործընկեր: Որպես հետեւանք՝ Ա.Դավութօղլուն հայտարարեց, որ չարժե ակնկալել ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի միջեւ լիարժեք համագործակցություն, քանի դեռ Թուրքիային թույլ չեն տալիս մասնակցել այդ համագործակցության ձեւաչափին:

Այսպիսով, երկարաժամկետ հեռանկարում Թուրքիայի եւ Հյուսիս-ատլանտյան դաշինքի փոխադարձ օտարացումը կարելի է համարել իրական: Անշուշտ, դեռեւս վաղաժամ է խոսել ՆԱՏՕ-ի կազմից Թուրքիայի հեռանալու մասին, սակայն ոչ հեռու ապագայում Հյուսիսատլանտյան դաշինքը կարող է գալ այն կետին, որտեղ պետք է որոշում կայացնի: Հաշվի առնելով վերը նշված զարգացումները եւ Անկարայի հարաբերությունների սերտացումը Թեհրանի եւ Դամասկոսի հետ՝ ՆԱՏՕ-ն դժվար թե տրամադրի իր առաջատար ռազմական տեխնոլոգիաները Թուրքիային: ՆԱՏՕ-ի ներսում փորձագիտական մակարդակով արդեն հաստատվել է այն տեսակետը, որ թեպետ Թուրքիան մնում է ՆԱՏՕ-ի դաշնակիցը, սակայն՝ ոչ այնքան հուսալի դաշնակիցը: Նմանապես, Թուրքիայի ներսում էլ հասունանում է այն մտայնությունը, թե Արեւմուտքի շահերը չեն համընկնում թուրքական շահերի հետ:

Ընդհանուր առմամբ, ՆԱՏՕ-ի Լիսաբոնի գագաթաժողովը կարելի է հաջողված համարել Թուրքիայի համար՝ այն տեսանկյունից, որ Անկարան կարողացավ պահպանել բարիդրացիական հարաբերություններն Իրանի հետ եւ ՆԱՏՕ-ում իր շահերը: Սակայն հետագայում եւս Թուրքիայի առջեւ կանգնելու է տարածաշրջանային երկրների եւ Հյուսիսատլանտյան դաշինքի հետ հարաբերություններում հավասարակշռության ապահովման խնդիրը:

Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ ՆԱՏՕ-ն շարունակելու է մնալ ԱՄՆ ռազմավարության կարեւոր գործիքներից մեկը, որի միջոցով ապահովվում է ամերիկյան ներգրավվածությունը եվրոպական գործերում: Այսպես, Լիսաբոնում ընդունված ՆԱՏՕ-ի Ռազմավարական հայեցակարգը լիովին համընկնում է ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի կողմից հնչեցված ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին, Ռուսաստանի հետ «վերաբեռնավորման» եւ Թուրքիայի ներգրավման ու զսպման ուղեգծին: Եվ եթե նախկինում Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եւ

Թուրքիան դիմադրում էին Եվրոպայում ՀՀՊ-ի տեղակայման ամերիկյան ծրագրին, այսօր նրանք ներգրավվեցին դրանում որպես մասնակիցներ՝ հույսը դնելով այն բանի վրա, որ ծրագրի ֆինանսական հիմնական բեռը կտանի ԱՄՆ-ը:

ՆԱՏՕ-ի գործոնը կանխում է նաեւ Եվրոպացի որոշ փորձագետների կողմից առաջարկվող ԵՄ-ի, Ռուսաստանի եւ Թուրքիայի (Եվրոպայի երեք բեւեռների)՝ մեկ ձեւաչափի մեջ միավորման գաղափարի իրագործումը: Դժվար թե ԱՄՆ-ը, որն ամբողջ Եվրոպան համարում է իր ազդեցության գոտին, թույլ տա նման ձեւաչափերի ստեղծումը:

Միաժամանակ, ՆԱՏՕ-ն շարունակելու է ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ նրա հետագա մերձեցումը թույլ չտալու նպատակով:

Մի կարեւոր հանգամանք էւ: Նոր աշխարհակարգում պետությունների եւ դաշինքների նույնականացման հարցի տեսանկյունից՝ առաջին պլան է դուրս գալիս քաղաքակրթական գործոնը: Այս առումով, ՆԱՏՕ-ն պետք է դառնա այնպիսի կազմակերպություն, որն իր անդամների եւ գործընկերների անվտանգության երաշխիքները կներկայացնի քաղաքակրթական կամ արժեհամակարգային սկզբունքների հիման վրա: Այդ դեպքում Թուրքիայի տեղն ու դերը դաշինքում իրոք կենթարկվեն լուրջ վերիմաստավորման:

## **ԷԳԵՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ** **ԹՈՒՐՔ-ՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** **Հայկ Գաբրիելյան**

Այսօր Հունաստանը գտնում է, որ իր եւ թուրքիայի միջեւ առկա կարեւորագույն խնդիրներից է Էգեյան ծովի մայրցամաքային շելֆի բաժանումը: Մինչդեռ թուրքիան, դրա հետ մեկտեղ, առաջ է քաշում նաեւ օդային ու ծովային սահմանների խնդիրը: Համառոտ անդրադառնանք դրանց:

**Տարածքային ջրեր եւ օդային սահման** – Տարածքային ջրերն ափի երկայնքով, ինչպես նաեւ ներքին ծովային ջրերից դուրս ընկած ծովային գոտին են, որն անվանում են նաեւ տարածքային ծով: Տարածքային ծովի արտաքին սահմանը հանդիսանում է ափամերձ պետության ծովային պետական սահմանը: Ստացվում է, որ ափամերձ պետության ինքնիշխանությունը տարածվում է տարածքային ջրերի մակերեւույթի ու դրանց հատակի ընդերքի, ինչպես նաեւ դրանց վրայի օդային տարածքի վրա:

Պետք է նշել, որ Էգեյան ծովում Հունաստանին են պատկանում հազարից ավելի կղզիներ, որոնց մի մասը բավական մոտ է գտնվում թուրքական ափերին (3 ծովային մղոնից քիչ ավելի): 1923 թվականի Լոզանի պայմանագրով տարածքային ջրերի հեռավորությունը սահմանվեց 3 ծովային մղոն (5.6 կիլոմետր): 1936 թվականին Հունաստանը դա հասցրեց 6 ծովային մղոնի (11 կիլոմետր), ինչի արդյունքում Էգեյան ծովի հունական մասնաբաժինը կազմեց 35 տոկոս: Իսկ ահա 1947 թվականին, երբ Դոդեկանեսյան կղզիներն Իտալիայից անցան Հունաստանին, վերջինիս մասնաբաժինն արդեն հասավ 47 տոկոսի, սակայն 6 ծովային մղոնի սահմանագիծը պահպանվեց:

1981 թվականին Հունաստանի վարչապետ Անդրեաս Պապանդրեուն հայտարարեց Հունաստանի տարածքային ջրերը 12 ծովային մղոնի (22 կիլոմետր) վրա տարածելու իր մտադրության մասին: Թուրքական կողմի կարծիքով՝ դա նշանակում էր, որ Էգեյան ծովը վերածվելու էր հունական լճի, քանի որ այդ դեպքում արդեն հունական մասնաբաժինը կազմելու էր 72.8 տոկոս: Իսկ դա իր հերթին լրջորեն կսահմանափակեր բաց ծով դուրս գալու թուրքիայի հնարավորությունները, քանի որ Էգեյանը կիսափակ ծով է: 12 ծովային մղոնի կիրառման դեպքում թուրքիայի տարածքային ջրերը 16.3 տոկոսից կնվազեին մինչեւ 9.27 տոկոսի:

Սակայն 1981 թվականին կողմերին հաջողվեց խուսափել միմյանց հետ պատերազմելուց:

1995 թվականի ամռանը (նաեւ 1996 թվականի սկզբին) երկու երկրները դարձյալ հայտնվեցին պատերազմի նախաշեմին, երբ Յունաստանը հայտարարեց Էգեյան ծովում իր տարածքային ջրերը մինչեւ 12 ծովային մղոն հեռավորության վրա տարածելու մասին: Թուրքական կողմը դա որակեց որպես «casus belli»՝ պատերազմ հայտարարելու առիթ: Ապա թուրքական մեջլիսն իր կառավարությանն օժտեց ռազմական գործողություններ վարելու լիազորություններով: Թուրքական կողմն Էգեյան եւ Մարմարա ծովերում ձեռնարկեց «Efes-95» անունը կրող լայնածավալ ծովային եւ օդային զորավարժություններ, ինչը հունական կողմը որակեց որպես սադրանք: Սակայն այս անգամ էլ գործը չհասավ պատերազմի:

2004 թվականի աշնանը կրկին սրվեցին թուրք-հունական հարաբերությունները, ինչի պատճառը դարձյալ Էգեյան ծովում երկու երկրների սահմանագիծն էր: Յունաստանը Թուրքիային մեղադրեց իր տարածքային ջրերը եւ օդային սահմանը բազմիցս խախտելու մեջ՝ սպառնալով խնդիրներ հարուցել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում: Թուրքիան էլ իր հերթին Յունաստանին մեղադրեց նրանում, որ վերջինս ցանկանում է Էգեյանը դարձնել իր ներքին ծովը եւ դրանով իսկ Միջերկրական ծովից Թուրքիայի դեմ պատ կառուցել:

Օդային սահմանի հարցում Յունաստանը պնդում է, որ միջազգային իրավունքի համաձայն՝ իր օդային սահմանները տարածվում են Էգեյան ծովի կղզիներից 10 ծովային մղոն (19 կիլոմետր) հեռավորության վրա: Մինչդեռ Թուրքիան հունական օդային տարածությունը ճանաչում է կղզիների շուրջ ընկած միայն 10 կիլոմետր (6 ծովային մղոն) հեռավորության վրա: Թուրքական կողմը նշում է, որ աշխարհում նմանատիպ պրակտիկա գոյություն չունի, երբ որեւէ երկրի օդային տարածքը գերազանցի նրա տարածքային ջրերը: Սակայն իրականում դա այդպես չէ. ճիշտ է՝ 1931 թվականին Յունաստանն իր օդային սահմանը հաստատեց կղզիներից 10 ծովային մղոն հեռավորության վրա, սակայն եթե մենք հունական 12 ծովային մղոնանոց տարածքային ջրերի հաշվարկն սկսենք ոչ թե Բալկանյան թերակղզուց, այլ Էգեյան ծովում գտնվող հունական կղզիներից (ինչպես որ ընդունված է արշիպելագ-երկրի պարագայում), ապա կստացվի, որ հունական կողմը դեռ կարող է եւս 2 ծովային մղոնով առաջ տանել իր օդային սահմանը:

Թուրքական կողմի այդ դիրքորոշման պատճառով էլ թուրք օդաչուներն իրենց իրավունք են վերապահում թռչելու Էգեյան ծովում

միմյանց հարող կղզիների վրայով, ինչը Յունաստանը դիտարկում է որպես իր օդային տարածքի խախտում եւ կանոնավոր օդ է բարձրացնում իր կործանիչները: Սակայն դրանք կրակ չեն արձակում եւ մանեւրների միջոցով հակառակորդի էսկադրիլիաներին «ուղեկցում» են դեպի թուրքական օդային տարածք: Իսկ ահա 2006 թվականի մայիսին հունական ու թուրքական օդաչուները հունական Կարպատոս կղզու շրջանում մոտ 9 կիլոմետր բարձրության վրա նմանատիպ մանեւրների ժամանակ չեն կարողացել վերահսկել իրենց «F-16» տիպի ինքնաթիռները եւ բախվել են միմյանց:

2010 թվականի հոկտեմբերի 20-ին թուրքական «Միլիթեթ» թերթը նշեց, որ Յունաստանը միայն 2009 թվականին Էգեյան ծովի երկնքում մարտական ինքնաթիռների միջոցով Թուրքիայի դեմ իրականացրել է 1383 կանխարգելիչ գործողություն, որոնց վրա ծախսել է 25.620.000 եվրո: Ընդհանուր առմամբ, 2000–2009 թվականներին Յունաստանի ռազմաօդային ուժերն իրականացրել են 19.888 այդպիսի կանխարգելիչ թռիչք, որոնց վրա հունական կողմը ծախսել է 447.5 միլիոն եվրո: Յունաստանն էլ նշում է, որ 2000–2009 թվականներին թուրքական ռազմաօդային ուժերը 49.228 անգամ խախտել են իր օդային սահմանը:

**Մայրցամաքային շելֆ** – 1970-ական թվականներին հայտնի դարձավ, որ Էգեյան ծովի շելֆը պարունակում է նավթագազային պաշարներ, որոնք ԵՄ-ին հնարավորություն կընձեռեն թուլացնելու Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածությունը: Էգեյան ծովի շելֆի հարցում վիճելի է մնում այն հարցը, թե *բացառապես տնտեսական գոտու*\* սահմանագիծն անցկացնելիս որչափ ուշադրություն պետք է հատկացվի Թուրքիայի ափերի մոտ գտնվող հունական կղզիներին, որոնց թուրքական կողմը համարում է անատոլիական ցամաքի բնական (աշխարհագրական) շարունակությունը: Թուրքիան գտնում է, որ 30 ծովային մղոնի հաշվարկը պետք է սկսվի հունական ցամաքից (Բալկանյան թերակղզուց) եւ ոչ թե Թուրքիայի ափերի մոտ գտնվող հունական կղզիներից: Բնականաբար, պաշտոնական Աթենքն ընդդիմանում է դրան:

1987 թվականին Յունաստանը ձեռնամուխ եղավ Էգեյան ծովում գտնվող Թոսոս կղզու մերձակայքում նավթաորոնողական աշխատանքներին, ինչը Թուրքիան որակեց իբրեւ ոտնձգություն իր ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ: Թուրքական կողմն անմիջապես այդ շրջան ուղարկեց մեծաթիվ ռազմանավեր ու ինքնաթիռներ, եւ միայն վերջին պահին հաջողվեց խույս տալ պատերազմից, ինչպես որ եղավ 1974 եւ 1976 թվականներին: Դրանից հետո կողմերը բավական մեծ զգուշավորություն են ցուցաբերում, ինչը

վերաբերում է նաև Կիպրոսի հյուսիսային հատվածի մերձակայքում առկա ածխաջրածինների շահագործմանը: Ի դեպ, այս խնդիրը խիստ արդիական է երկու երկրների համար էլ, քանի որ նրանք չեն տիրապետում ածխաջրածինների քիչ թե շատ պաշարների, որոնց կարիքը սուր են զգում նրանց տնտեսությունները:

### **Թուրք-հունական հարաբերությունների ջերմացում**

2009 թվականի վերջից սկսած՝ թուրք-հունական հարաբերություններում նկատվեց որոշակի մերձեցում, ինչին նպաստեցին 2009 թվականի հոկտեմբերի 4-ին Յունաստանում կայացած վաղաժամ խորհրդարանական ընտրությունները: Դրանցում հաղթանակ տարավ ընդդիմադիր Յանաիունական սոցիալիստական շարժումը, որի լիդեր Գեորգիոս Պապանդրեուն դարձավ երկրի վարչապետ: Նորընտիր վարչապետն առաջին արտասահմանյան այցը կատարեց դեպի Թուրքիա եւ հանդիպում ունեցավ իր թուրք գործընկեր Էրդողանի հետ:

2010 թվականի մայիսի 14-ին Էրդողանն իր հերթին երկօրյա պաշտոնական այցով մեկնեց Յունաստան, իսկ մինչ այդ հայտարարեց, որ Էգեյան ծովը երկու երկրների համար պետք է լինի ոչ թե բաժանող, այլ՝ միավորող ծով: Աթենքում կողմերը կնքեցին 22 երկկողմանի համաձայնագիր, ինչի համար էլ Էրդողանն իր այցը որակեց որպես պատմական: Այդ համաձայնագրերն առնչվում էին տնտեսական, առևտրային, ներքին գործերի, արտաքին քաղաքականության, կրթական, կապի, էներգետիկ, զբոսաշրջային եւ շրջակա միջավայրի ոլորտներին:

Չնայած դրան՝ որեւէ լուրջ առաջընթաց չգրանցվեց կիպրական եւ Էգեյան ծովի համալիր խնդիրների շուրջ: Աթենքում Էրդողանն առաջարկեց Էգեյան ծովի կղզիների վրա պարեկություն կատարող թուրքական ու հունական ինքնաթիռների վրայից հանել ռումբերն ու հրթիռները: Յունական կողմն էլ իր հերթին ցանկություն հայտնեց, որ թուրքական կողմը նախապես իրեն տեղեկացնի հունական կղզիների վրայով թռչող թուրքական ինքնաթիռների թռիչքների մասին: Ի դեպ, Էրդողանի աթենքյան այցից ընդամենը 2 ժամ առաջ թուրքական «F-16» տիպի 6 կործանիչներ խախտեցին հունական օդային սահմանը՝ թռիչքներ գործելով Էգեյան ծովի հյուսիսում գտնվող Լեմնոս եւ Լեսբոս կղզիների վրայով: Ստամբուլ վերադառնալուց հետո էլ Էրդողանը հայտարարեց մայրցամաքային շելֆի եւ օդային սահմանի խնդիրները Յաագայի միջազգային դատարանի տնօրինությանը հանձնելու իր մտադրության մասին:

2010 թվականի մայիսին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն նշեց, որ եթե Թուրքիայի ու Յունաստանի հարաբերություններում ձեւավորված նոր մթնոլորտը պահպանվի եւս 5 տարի, ապա կողմերը կսկսեն կրճատել Էգեյան ծովի տարածաշրջանում առկա իրենց սպառազինությունը եւ դրանով իսկ զգալի գումարներ կտնտեսեն: Դավութօղլուն՝ որպես օրինակ, նշեց Թուրքիայի ու Սիրիայի հարաբերությունները, երբ նախկինում երկու երկրներն էլ զորքեր էին կուտակել իրենց ընդհանուր սահմանին, մինչդեռ ներկայումս այնտեղ նման տեսարանի չես հանդիպի:

Սեպտեմբերի 9-ին Դավութօղլուն հայտարարեց. «Աթենքը պետք է դադարեցնի Էգեյան ծովի շուրջ իր պահանջները, ինչը կհանդիսանա Թուրքիայի անվտանգությանն ամենամեծ սպառնալիք ներկայացնող երկրների ցանկից Յունաստանի անունը հանելու պատասխանը: 12 ժովային մղոնի հարցում Թուրքիան միակողմանի քայլեր չի ձեռնարկի»: Հիշեցնենք, որ Թուրքիայի «գաղտնի սահմանադրություն» հանդիսացող Ազգային անվտանգության քաղաքականության նոր փաստաթղթում, որը հաստատվեց հոկտեմբերի 27-ին, նաեւ նշված է այն մասին, որ այսուհետ հունական ինքնաթիռների կողմից «վիճելի տարածքների» վրա թռչելը, ինչպես նաեւ իր տարածքային ջրերը 12 ժովային մղոնի վրա տարածելու հունական հայտարարությունները չեն կարող «casus belli»-ի առաջացման պատճառ հանդիսանալ:

Հոկտեմբերին Էրդողանն այս տարվա մեջ երկրորդ անգամ մեկնեց Յունաստան՝ մասնակցելու հոկտեմբերի 22-ին Աթենքում կայանալիք միջերկրածովյան երկրների կլիմայի փոփոխության գագաթաժողովին: Աթենք մեկնելուց առաջ Էրդողանը խաղաղության ուղերձ հղեց Յունաստանին, որում ցանկություն հայտնեց, որ Էգեյան ծովի երկնքում այլեւս չլինեն մարտական ինքնաթիռներ եւ որ թուրք ու հույն հասարակություններն իրենց մտքից հանեն ռազմական բախման հնարավորությունը: Էրդողանի այցից առաջ Յունաստանի վարչապետ Պապանդրեուն իր հերթին հայտարարեց, թե Էգեյան ծովը կարող է վերածվել բարեկամության ծովի, եւ որ պետք է փոխադարձաբար ինչ-որ բան զոհաբերել՝ հանուն եվրոպական ընտանիքում իրենց ընդհանուր ապագայի:

Բացի այդ, նախքան Աթենք մեկնելը, Էրդողանը, Իսրայելի հետ կապված, վերջնագիր ներկայացրեց Յունաստանին. «Ես չեմ գնա Աթենք, եթե գագաթաժողովին մասնակցի նաեւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն: Ինչպե՞ս կարող եմ մի վայրում գտնվել այն մարդու հետ, ով հպարտանում է «Ազատության նավատորմի» դեմ ռազմական գործողություններով: Նման մարդու հետ ոչ միայն որեւէ գործ չեմ ուզում

ունենալ, այլև չեն ուզում խոսել: Որտեղ նա կա, ես այնտեղ չկամ»: Սակայն Էրդողանի այս վերջնագիրն անտեղի էր, քանի որ դրանից առաջ Իսրայելի վարչապետի ներկայացուցիչը տեղեկացրել էր, որ Նեթանյահուն չի պատրաստվում մասնակցել աթենքյան զագաթաժողովին:

Հարկ է նշել, որ թուրքական կողմը խորապես անհանգստացած է ներկայումս իսրայելա-հունական հարաբերությունների ջերմացմամբ: Յուկտեմբերի կեսերին Յունաստանի ու Իսրայելի ռազմաօդային ուժերը համատեղ զորավարություններ անցկացրին, ինչից անմիջապես հետո էլ կողմերը ստորագրեցին քաղաքացիական ավիացիայի ինքնաթիռների կողմից օդային տարածքի համատեղ օգտագործման մասին համաձայնագիրը: Թուրքական կողմը նշում էր, որ Իսրայելի հետ իրենց հարաբերությունների վատթարացումից հետո Յունաստանն Իսրայելի հետ քաղաքական խաղում աստիճանաբար զբաղեցնում է Թուրքիայի տեղը:

Թուրք-հունական որոշակի մերձեցումը հանգեցրեց նրան, որ 2010 թվականի նոյեմբերի 10-ին՝ Քեմալ Աթաթուրքի մահվան 72-ամյա տարելիցի օրը, Աթաթուրքն առաջին անգամ հայտնվեց հունական «NET» պետական հեռուստատեսության էկրանին: «Պատմության մեջ այս օրը» հաղորդաշարի ժամանակ ներկայացվեց նրա կյանքի մասին պատմող տեսանյութ: Ռեկորդն այսքանով չսահմանափակվեց, քանի որ Սալոնիկի նորընտիր քաղաքապետ Իոանիս Բուտարիսը հայտնեց քաղաքի հրապարակներից մեկում երիտթուրքերին նվիրված հուշարձան տեղադրելու իր մտադրության մասին, ինչը մեծ դժգոհություն առաջացրեց հայ համայնքի շրջանում:

Նոյեմբերի վերջին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Նյու Յորքում հայտարարեց, թե որքան արդյունավետ է աշխատում իր կողմից առաջ քաշված «զրո խնդիր հարեւանների հետ» քաղաքական կուրսը եւ այդ առումով շոշափեց նաեւ Յունաստանի անունը. «Թուրք-հունական 87-ամյա հարաբերությունների պատմության ընթացքում կողմերը կնքել էին ընդամենը 35 համաձայնագիր, մինչդեռ միայն մայիս ամսին մեկ օրում մենք Յունաստանի հետ կնքեցինք միանգամից 22 համաձայնագիր»:

Ներկայումս թուրք-հունական որոշակի մերձեցման մասին են խոսում նաեւ երկու երկրների բարձրաստիճան գինվորականների այցերը: Նոյեմբերի 22-ին Թուրքիա այցելեց Յունաստանի ռազմածովային ուժերի հրամանատար, փոխծովակալ Դիմիտրիոս Էլեֆսիմիոտիսը, որը հանդիպում ունեցավ իր թուրք գործընկեր, բանակային ծովակալ Ուղուր Յիդիթի հետ, ինչպես նաեւ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Սեբահաթթին Ըշըք Քոշաների հետ: Իսկ ահա դեկտեմբերի 8-ին Թուրքիա

այցելեց Յունաստանի Ցամաքային գորքերի հրամանատար, գեներալ լեյտենանտ Ֆրազկուլիս Ֆրազկոսը, որը նույնպես հանդիպեց իր թուրք գործընկեր, բանակի գեներալ Էրդալ Ջեյլանօղլուի եւ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի հետ:

Նոյեմբերի 26-ին թուրքական լրատվամիջոցները հայտնեցին, թե Թուրքիան ճանաչել է Յունաստանի 12 ծովային մղոնանոց գոտին, եւ որ այդ շոկային պայմանավորվածությունը ձեռք է բերվել երկու երկրների ԱԳՆ ներկայացուցիչների հանդիպման ժամանակ: Սակայն Էրդողանը հայտարարեց, որ այդպիսի ոչ մի համաձայնագիր էլ չկա, եւ որ բանակցությունները դեռ ընթացքի մեջ են: Դավութօղլուն էլ իր հերթին նշեց, թե այդ հարցում կա առաջընթաց, սակայն այս պահին մանրամասների մասին խոսելու կարիք չկա:

Էգեյան հակամարտությունն արդեն տասնամյակներ շարունակ չի կորցնում իր արդիականությունը: Նախորդ տարվանից գրանցված հույն-թուրքական մերձեցումը կողմերի մոտ որոշակի հույսեր է արթնացրել վերոնշյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ: Սակայն դրանք (գումարած նաեւ կիպրական խնդիրը) շատ խրթին բնույթ են կրում, ինչի մասին վկայում է նաեւ Էրդողանի հուսահատությունը եւ տվյալ խնդրի շուրջ Չաազայի միջազգային դատարան դիմելու մասին հայտարարությունը:

Չարցի կարգավորմանը կարող է նաեւ նպաստել այն, որ ներկայումս Յունաստանը ոչ միայն խնդիրներ չի հարուցում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում, այլեւ ակտիվորեն հանդես է գալիս դրա օգտին: Նոյեմբերի 25-ին Յունաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Գրիգորիս Դելավեկուրասը հայտարարեց, որ ներկայումս ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացն առաջ է շարժվում «կրիայի արագությամբ» եւ որ իրենց կարծիքով՝ 2011 թվականի հունիսին Թուրքիայում կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո պետք է ԵՄ-Թուրքիա գազաթափողով գումարել, որը Թուրքիայի համար կհանդիսանա ինքնատիպ «ճանապարհային քարտեզ» եւ նոր ռիթմ կհաղորդի բանակցային գործընթացին:

---

\* 1974 թվականին ծովային խոշոր երկրներն ընդունեցին բացառապես տնտեսական գոտու (ԲՏԳ) մասին կոնցեպցիան: Դրանով ԲՏԳ սահման համարվեց տարածքային ջրերից դուրս ընկած մինչեւ 200 ծովային մղոնը (370.4 կիլոմետր):

## **ԿԻՔԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Արտաշես Տեր-Չարությունյան**

Ս.թ. նոյեմբերին Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում ընդունվեց Չյուսիսատլանտյան դաշինքի նոր Ռազմավարական հայեցակարգը, որի 12-րդ կետում կարդում ենք. «Կիբեռհարձակումները կարող են հասնել մի շեմի, որը վտանգում է ազգային ու եվրատլանտյան բարեկեցությունը, անվտանգությունը եւ կայունությունը: Այդպիսի հարձակումների հետևում կարող են կանգնած լինել օտարերկրյա ռազմուժն ու հետախուզությունները, կազմակերպված հանցավորությունը, ահաբեկչական ու էքստրեմիստական խմբերը»:

Դեռ մինչեւ Ռազմավարական հայեցակարգի ընդունումը, արեւմտյան աղբյուրները գրում էին, թե ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի գլխավորությամբ գործող փորձագետների խումբը, որը ձեռնամուխ է եղել ՆԱՏՕ-ի նոր հայեցակարգի մշակմանը, հատուկ ուշադրություն է դարձնելու նաեւ կիբեռանվտանգությանը, քանզի հարցը ձեռք է բերել առաջնային նշանակություն՝ հաշվի առնելով, որ տարեցտարի մեծանում է Չյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկրների ռազմական ու քաղաքացիական առանցքային ենթակառուցվածքների կախվածությունը կիբեռտարածությունից:

Մյուս կողմից, հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում դաշինքի անդամ առանցքային երկու պետությունները՝ Միացյալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիան, գրեթե միաժամանակ՝ վերջին մեկ ու կես տարվա ընթացքում, ձեռնամուխ եղան կիբեռանվտանգությամբ զբաղվող հատուկ մարմինների ստեղծմանը եւ զարգացմանը, որոնք, սակայն, արդեն ոչ թե ընդամենը ստորաբաժանումներ են պաշտպանության նախարարությունների կամ հատուկ ծառայությունների կառուցվածքում, այլ այդ երկրների անվտանգության ապահովման համակարգում ստացել են առաջնային օղակների կարգավիճակ:

### **ԱՄՆ Cybercom-ը եւ**

### **Մեծ Բրիտանիայի Cyber Operations Group-ը**

2009թ. հունիսին ԱՄՆ պաշտպանության նախարարը հայտարարեց, թե Միացյալ Նահանգները ձեւավորելու է կիբեռհարցերով զբաղվող ռազմական հատուկ միավորում՝ Կիբեռհրամանատարություն (Cyber

Command, կարճ՝ Cybercom): Ըստ որոշ գնահատականների, միայն ԱՄՆ պաշտպանության նախարարությունը ներկայում ունի մոտ 15 հազ. ցանց, որոնց միացված են 7 մլն համակարգիչներ ու այլ սարքավորումներ՝ աշխարհի 88 երկրներում (հայտնի է, որ 2008թ. հոկտեմբերից մինչև 2009թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Պենտագոնը ծախսել է մոտ \$100 մլն՝ կիբեռհարձակումների վնասները չեզոքացնելու եւ ցանցերում ի հայտ եկած տարաբնույթ խնդիրները լուծելու համար):

Այս տարվա մայիսին նշանակվեց Cybercom-ի առաջին հրամանատարը՝ գեներալ Քեյթ Լեքսանդերը, որը միաժամանակ՝ 2005թ. օգոստոսից, զբաղեցնում է գլխավորապես էլեկտրոնային հետախուզությամբ զբաղվող ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (USA National Security Agency) տնօրենի պաշտոնը: Հայտարարվել է, որ 2010–2015թթ. ընթացքում ԱՄՆ կառավարությունը կիբեռանվտանգության համար ծախսելու է \$50 մլրդ:

2009թ. հունիսին հրապարակվեց Մեծ Բրիտանիայի «Կիբեռանվտանգության ռազմավարությունը» (UK Cyber Security Strategy), որի համաձայն՝ բրիտանական կառավարությանը կից ստեղծվեց Կիբեռանվտանգության գրասենյակ (Office of Cyber Security) եւ Կիբեռանվտանգության գործողությունների կենտրոն (Cyber Security Operations Centre): Կիբեռանվտանգության գրասենյակի տարեկան բյուջեն հաստատվեց 130 հազ. ֆունտ ստեռլինգի չափով, իսկ կենտրոնի բյուջեն չհրապարակվեց:

2010թ. ընդունվեցին Մեծ Բրիտանիայի «Ազգային անվտանգության ռազմավարություն» (National Security Strategy) եւ «Ռազմավարական պաշտպանության ու անվտանգության զեկույց» (Strategic Defence and Security Review) փաստաթղթերի նոր տարբերակները: Ռազմավարությունը բրիտանական կիբեռտարածության վրա հարձակումները դասեց առաջին կարգի վտանգների շարքում՝ միջազգային ահաբեկչության, բնական լայնամասշտաբ աղետների ու պետությունների միջև ռազմական գործողությունների կողքին: Իսկ զեկույցը հայտարարեց «Ազգային կիբեռանվտանգության ծրագրի» (National Cyber Security Programme) մեկնարկի մասին, որի իրականացման համար առաջիկա չորս տարիներին հատկացվելու է 630 մլն ֆունտ ստեռլինգ ու, բացի այդ, ստեղծվելու է Կիբեռգործողությունների խումբ (Cyber Operations Group), որն իր խնդիրների լուծման գործում պետք է համախմբի պետական ու մասնավոր սեկտորների կարողությունները:

Ներկայացվածն, իհարկե, ցույց է տալիս, որ անվտանգության ապահովման արեւմտյան հայեցակարգերում կիբեռանվտանգության

ուղղությունը աճելով՝ իր նշանակությամբ մոտենում է ավանդական ուղղություններին:

Սակայն էլ ավելի կարելու է առանձնացնել Վաշինգտոնի ու Լոնդոնի քայլերը՝ ստեղծել կիբերանվտանգությամբ զգալիորդ վերոհիշյալ մարմինները, ինչը վկայում է,

- որ կիբերտարածությունը դառնում է (եթե արդեն չի դարձել) այդ երկրների ռազմավարությունը սպասարկող կարելու ուղղություն, ինչպես, օրինակ՝ քաղաքական, տնտեսական, ռազմական ու նշակության ուղղություններն են, եւ հենց այստեղից է բխել կիբերտարածությամբ զբաղվող մարմինների կարգավիճակի բարձրացումը նշված պետությունների ազգային անվտանգության ապահովման համակարգերում,

- եթե նշվածը համապատասխանում է իրականությանը, ապա առաջիկայում մենք պետք է ականատես լինենք կիբերտարածությունում նոր մակարդակի նախաձեռնությունների ի հայտ գալուն՝ տեղեկատվական նոր որակի կամպանիաներից սկսած մինչև հաքերային նոր բնույթի հարձակումներ, որոնք ի վիճակի կլինեն շարքից հանել հակառակորդի ոչ միայն կիբերտիրույթները, այլև իրական կյանքում գոյություն ունեցող ենթակառուցվածքները:

### **Stuxnet. կիբերպատերազմների նոր փուլ**

Այս սեպտեմբերի վերջին իրանական իշխանությունները պաշտոնապես ընդունեցին, որ երկրի միջուկային օբյեկտների (այդ թվում Բուշեի ՍԷԿ-ի ու Նաթանգում գտնվող ուրանի հարստացման գործարանի) կառավարման համակարգերի համակարգչային ծրագրերը, որոնք գերմանական Siemens ընկերության արտադրանքն են, հարձակման են ենթարկվել Stuxnet անվամբ համակարգչային վիրուսի կողմից:

Ավելի ուշ հայտնի դարձան որոշ մանրամասներ: Արեւմտյան աղբյուրների ներկայացմամբ, Stuxnet-ը հայտնաբերվել է Յնդկաստանում, Չինաստանում, Ինդոնեզիայում ու Իրանում գտնվող համակարգիչներում, սակայն համակարգչային վիրուսների դեմ պայքարի ծրագրեր մշակող ու վաճառող ամերիկյան Symantec ընկերության գնահատմամբ՝ Stuxnet վիրուսների մոտ 60%-ը կենտրոնացած է եղել հենց Իրանում: Ըստ մինչ օրս եղած հրապարակումների, իրանական միջուկային օբյեկտներում Stuxnet-ը վնասել է մինչև 30 հազ. համակարգիչներ ու այլ սարքավորումներ: Մինսկում գործող VirusBlokAda ընկերության համաձայն, Իրանի տարածքում գտնվող ու ընկերության կողմից սպասարկվող համակարգիչներում Stuxnet վիրուսն առաջին անգամ հայտնաբերվել է դեռ այս հունիսի

17-ին, այսինքն՝ մոտ երկուս ու կես ամիս այն բանից առաջ, երբ իրանական իշխանությունները սկսեցին խոսել վիրուսի կողմից պատճառվող վնասի մասին: Ավելի ուշ նաեւ հայտնի դարձավ, որ իրանական միջուկային օբյեկտներում գտնված Stuxnet-ի տարբերակներից մեկն այնտեղ հայտնվել է դեռ 2009թ. հունիսին:

Արեւմտյան լրատվամիջոցները գրեցին նաեւ Stuxnet-ի գործունեության տրամաբանության մասին: Վիրուսը հայտնվելով համակարգչի կամ համակարգչային ծրագրով (software) կառավարվող որեւէ սարքավորման մեջ՝ չի գործում («քնած» է մնում) այնքան ժամանակ, քանի դեռ չի հայտնաբերում իրեն անհրաժեշտ համապատասխան կողը, որն էլ կառավարում է որոշակի արդյունաբերական գործընթաց (օրինակ, միջուկային որեւէ օբյեկտի աշխատանքի կառավարում), որից հետո Stuxnet-ը ինքնուրույնաբար ակտիվանալով (կամ ակտիվանալով «դրսից» ստացված հրամանի համաձայն) սկսում է գործել՝ շարքից հանելով համապատասխան համակարգերն ու միաժամանակ «դուրս» փոխանցելով տվյալ օբյեկտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Միեւնույն ժամանակ, իրանական իշխանությունները խոսում էին վիրուսի դեմ պայքարի դժվարությունների մասին: Այսպես, սեպտեմբերի 27-ին իրանական Information Technology Company-ի փոխտնօրեն Համիդ Ալիփուրը հայտարարեց, թե Stuxnet-ը, տարածվելուց զատ, նաեւ ձեւափոխվում է, եւ հայտնաբերվելուց հետո վիրուսի երեք նոր տարբերակ է սկսել տարածվել: Այն ժամանակ Ալիփուրը նշում էր, որ մեկ-երկու ամիս կպահանջվի, մինչեւ Stuxnet-ի ամբողջական վնասագերծումը: Իսրայելական աղբյուրները սեպտեմբերի վերջին գրեցին, որ Թեհրանը, չկարողանալով ներքին ուժերով պայքարել վիրուսի դեմ, հետխորհրդային երկրներում ու Արեւելյան Եվրոպայում համակարգչային մասնագետներ է վարձում՝ Stuxnet-ը ոչնչացնելու համար<sup>1</sup>:

Պաշտոնական Թեհրանը հայտարարեց, որ վիրուսը չի ազդել Բուշեհրի ԱԷԿ-ի ու այլ կարեւոր միջուկային օբյեկտների գործունեության վրա: Նոյեմբերի 23-ին Իրանի Ատոմային էներգիայի կազմակերպության նախագահ Ալի Աքբար Սալեհին ընդգծեց, որ Stuxnet-ը որեւէ կերպ չի վնասել երկրի միջուկային ծրագիրը, իսկ բուն վիրուսը հայտնաբերվել է այն բանից հետո, երբ այն չի կարողացել հասնել իր նպատակին: Սակայն փաստն այն է, որ վիրուսի ի հայտ գալուց հետո Իրանը ստիպված եղավ սեպտեմբերի վերջից հոկտեմբերի կեսեր տեղափոխել Բուշեհրի ԱԷԿ-ի ռեակտորների ներբեռնումը միջուկային վառելիքով<sup>2</sup>, իսկ նոյեմբերի 16-22-ն էլ հարկադիր դադարի մատնվեց Նաթանզում գործող ուրանի հարստացման գործարանը,

քանի որ տատանումներ էին գրանցվել ցենտրիֆուգները սնող էլեկտրական հոսանքում<sup>3</sup>:

Չնայած հոկտեմբերի 2-ին Իրանի հետախուզության նախարար Չեյդար Մուսլեհին հայտարարեց, որ Stuxnet-ը «թշնամու կողմից ինտերնետի միջոցով ուղարկված «որդ» էր՝ կազմալուծելու Իրանի միջուկային ծրագիրը» (այդպիսով Թեհրանը պաշտոնապես ընդունեց, որ կիբերհարձակման են ենթարկվել իր միջուկային ենթակառուցվածքները), սակայն, այդքանով հանդերձ, այդպես էլ պաշտոնապես հայտնի չդարձավ, թե որ երկիր(ներ)ը կամ ինչ կազմակերպություն(ներ) է կանգնած եղել Stuxnet-ի հետեւում: Իսկ որ այդ վիրուսի ստեղծումն ու «տեղ հասցնելը» վեր էին շարքային հաքերների ուժերից, բոլորը կարծես թե համակարծիք են:

Փորձագիտական տարբեր գնահատականների համաձայն, որպեսզի Stuxnet-ը կարողանար ներգործել իրանական միջուկային օբյեկտների վրա, դեռ վիրուսի ստեղծման փուլում հարկավոր էին այդ օբյեկտների software-ների տվյալները, այլ կերպ ասած՝ հետախուզական տվյալներ: Բացի այդ, խնդիր կա վիրուսը տեղ հասցնել, ինչը դարձյալ հատուկ ծառայությունների գործունեության ոլորտից է: Հոկտեմբերի 20-ին Իրանի հաղորդակցության նախարար Ռեզա Թաքիփուրը հայտարարեց, թե միջուկային օբյեկտների համակարգիչներում վիրուսը տարածվել է նաև flash driver-ների («ֆլեշկա») միջոցով, ընդ որում՝ տարածող անձանց մի մասը դա արել է միտումնավոր, իսկ մի մասն էլ չի իմացել, որ իր «ֆլեշկան» պարունակում է Stuxnet վիրուսը: Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրանական անվտանգության մարմինները հայտարարեցին մի քանի «միջուկային լրտեսների» ձերբակալման մասին:

Միջազգային տարբեր հրապարակումներ որպես Stuxnet-ի հեղինակներ ու ակցիայի կազմակերպիչներ առաջին հերթին մատնացույց են անում ԱՄՆ-ին ու Իսրայելին՝ նշելով, որ դա մի փորձ էր՝ առանց ռազմուժի օգտագործման կազմալուծել իրանական միջուկային ծրագիրն ու միաժամանակ հոգեբանական ճնշում գործադրել Իրանի նկատմամբ: Սակայն կա տեսակետ, ըստ որի՝ ակցիային կարող էին մաս կազմել նաև ռուսական հատուկ ծառայությունները, քանի որ իրանական միջուկային օբյեկտներում աշխատող արտասահմանցիների գերակշիռ մասը հենց ռուսներ են: Որպես այս տեսակետի հիմնավորում նշվում են ռուս-իրանական հայտնի վերջին հակասություններն իրանական միջուկային ծրագրի շուրջ, ինչի արդյունքում Մոսկվան հրաժարվեց Թեհրանին վաճառել հակաօդային պաշտպանության C-300 համալիրները: Բացի այդ, ըստ որոշ տեղեկությունների, Stuxnet-ի հետ կապված

իրանական անվտանգության մարմինների անցկացրած հետաքննության ժամանակ հարցաքննվել են Իրանում աշխատող ռուս մասնագետներն ու նրանց ընտանիքների անդամները:

### **Չետեություններ**

Գլխավոր դիտարկումն, անշուշտ, այն չէ, թե ինչ երկիր կամ կազմակերպություն կարող էր կանգնած լինել Stuxnet-ի հետեւում, այլ այն, որ նոր որակի փորձ է արվել կիրբերհարձակման միջոցով հասնել պետության առանցքային ենթակառուցվածքների փաստացի ոչնչացմանը: Ջուզահեռաբար մենք տեսնում ենք, որ աշխարհի զարգացած երկրները (մասնավորապես, ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան) ձեռնամուխ են եղել նոր մակարդակի կիրբերանվտանգության մարմինների ստեղծմանը, ինչը միանշանակորեն հանգեցնելու է այդ մարմիններին տրվող նոր որակի առաջադրանքների ի հայտ գալուն:

Բերենք ԱՄՆ Ներքին անվտանգության նախարարության Ազգային կիրբերանվտանգության ու հաղորդակցությունների ինտեգրման կենտրոնի տնօրեն Շոն ՄըքԳարկի գնահատականը, որը նա հնչեցրեց նոյեմբերի 17-ին ԱՄՆ Սենատում լսումների ժամանակ. Stuxnet-ը «փոխեց խաղի կանոնները», եւ նման վիրուսը կարող է ժամանակակից աշխարհում շարքից հանել պետությունների համար կենսական ենթակառուցվածքները՝ վնասել էլեկտրաէներգիայի, խմելու ջրի բաշխիչ ցանցերը, համակարգչային ծրագրերով աշխատող գործարանները եւ այլն:

Թեեւ համարվում է, որ Չայաստանի ազգային անվտանգությունն այդ աստիճան փոխկապակցված չէ կիրբերտարածության հետ, ինչպես, օրինակ՝ աշխարհի զարգացած երկրների պարագայում է, սակայն, միեւնույն է, հարցն ուղղակիորեն առնչվում է նաեւ մեր անվտանգությանը.

- նախ՝ որովհետեւ ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ մեզ մոտ մեծանում է կիրբերտարածության նշանակությունը պետության տնտեսական, ռազմական ու քաղաքական ենթակառուցվածքների համար,
- երկրորդ՝ արդեն այսօր Չայաստանը հարեւան Ադրբեջանի ու Թուրքիայի կիրբերհարձակումների թիրախ է, որոնց հաճախակցությունը միջազգային առումով բավական բարձր է, եւ կիրբերտարածությունից մեր ենթակառուցվածքների կախվածության աճին զուգահեռ՝ այդ հարձակումների քանակն ու որակն աճելու են:

<sup>1</sup> Ի դեպ, նոյեմբերի 29-ին Թեհրանում տեղի ունեցած հարձակման հետևանքով զոհված պրոֆեսոր, միջուկային ֆիզիկայի գծով մասնագետ Մաջիդ Շահրիարին, իսրայելական աղբյուրների ներկայացմամբ, գլխավորում էր Stuxnet-ի դեմ պայքարող իրանցի մասնագետների խումբը: Ինչպես հայտնի է, նույն օրը Թեհրանում տեղի ունեցած այլ հարձակման հետևանքով ծանր վիրավորվեց միջուկային ֆիզիկայի գծով իրանցի մեկ այլ պրոֆեսոր՝ Ֆերեդուն Աբբասի-Դավանին, որը, ըստ նույն աղբյուրների, ուրանի հարստացման Նաթանզի գործարանում պատասխանատու է ցեմտրիֆուգների աշխատանքների համար: Ըստ մի հաշվարկի, նոյեմբերի 29-ի հարձակումները վերջին երկու տարվա ընթացքում Թեհրանում միջուկային ոլորտի իրանցի գիտնականների նկատմամբ հարձակումների շարքում թվով հինգերորդն էին: Նոյեմբերի 29-ից հետո Իրանի իշխանությունները որոշում կայացրին ուժեղացնել միջուկային ոլորտի իրենց մասնագետների անվտանգության ապահովումը:

<sup>2</sup> Իրանական պաշտոնական բացատրության համաձայն, հետաձգումը տեղի է ունեցել ռեակտորներից մեկի մոտ հայտնաբերված թեթևակի արտահոսքի պատճառով:

<sup>3</sup> Նաթանզում տեղի ունեցած այդ մեկշաբաթյա դադարի մասին հայտնել է նաեւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) տնօրեն Յուկիյա Ամանոն:

## ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԴՈՄԻՆՈՅԻ ԱՌԱՍՊԵԼԸ

### *Յոհան Բերգեմաս*

Երբ գործը հասնում է Իրանի միջուկային ծրագրի հետ կապված վտանգներին, նույնիսկ տարբեր գաղափարախոսությունների հետևորդներն ընդհանուր եզրեր են գտնում: Գրեթե բոլորը գալիս են այն եզրակացության, որ եթե Իրանը զարգացնի իր միջուկային զինանոցը, նրա հարեւանները նույնպես կհետեւեն այդ օրինակին: Օրինակ, ԱՄՆ նախկին սենատոր Սեմ Նանն ասել է. «Աշխարհի կառավարությունները պետք է հասկանան, թե ինչ վտանգ կա նրանում, եթե իրանցիները միջուկային զենք ստանան, քանի որ, ամենայն հավանականությամբ, Մերձավոր Արեւելքում կա 10 այլ երկիր, որոնք առաջիկա 10-20 տարիների ընթացքում կհետեւեն այդ օրինակին»: Ամերիկյան քաղաքականությունը մշակողները՝ սկսած պահպանողական Ջոն Բոլթոնից, որը ԵՄ-ում ԱՄՆ դեսպանն էր, մինչև փոխնախագահ Ջո Բայդենը, կարծես համաձայն են այս մռայլ կանխատեսման հետ:

Բայց «միջուկային դոմինոյի» այս սցենարի հետ կապված մի խնդիր կա. այն չի հաստատվում տվյալ գործընթացի ընթացքով: Միջուկային դարաշրջանի հենց սկզբից շատերն են վախեցել նրանից, որ միջուկային զենքն արագ եւ լայն տարածում կստանա: Համարյա 20 տարի էր ընկած առաջին միջուկային տերության՝ ԱՄՆ-ի (1945թ.) եւ հինգերորդի՝ Չինաստանի (1964թ.) հայտնվելու միջև:

Հաջորդ 40 տարիների ընթացքում միայն 5 հավելյալ միջուկային երկիր ավելացավ՝ Չնդկաստանը, Իսրայելը, Հարավային Աֆրիկան, Պակիստանն ու Հյուսիսային Կորեան: Հարավային Աֆրիկան ինքնակամ զինաթափվեց 1990թ.: Նման կերպ վարվեցին նաեւ Բելառուսը, Ղազախստանը եւ Ուկրաինան Խորհրդային Միության փլուզումից հետո: Այն բանից հետո, երբ Իսրայելը 1960-ականների վերջին զարգացրեց միջուկային զենք ստեղծելու իր հնարավորությունները, ոչ մի շրջայական ռեակցիա տարածաշրջանում դրան չհետեւեց, չնայած այս երկիրը շրջապատված էր թշնամիներով: Տարածաշրջանում նույնիսկ երկու երկրների միջև միջուկային սպառնազինության մրցավազք տեղի չունեցավ:

Նույն կերպ, չորս տարի է անցել այն ժամանակվանից, ինչ Հյուսիսային Կորեան դարձել է միջուկային երկիր, մինչդեռ ո՛չ Հարավային Կորեան, ո՛չ էլ ճապոնիան չեն հետեւել նրա օրինակին, չնայած

վերջիններս ունեն բոլոր հնարավորությունները՝ ստեղծել այն: Այս երկրների՝ միջուկային զենք չստեղծելու որոշումը մեծ մասամբ կայացվել է ԱՄՆ ջանքերի շնորհիվ, որին հաջողվել է մտափոխել նրանց: Ե՛վ Չարավային Կորեան, ե՛ւ ճապոնիան, իրենց անվտանգության հետ կապված՝ ունեն ամուր եւ երկարաժամկետ պայմանավորվածություններ Վաշինգտոնի հետ, այդ թվում՝ նրանք պաշտպանված են նաեւ ԱՄՆ ռազմավարական միջուկային «հովանոցի» ներքո, ինչը կարծես վերացնում է սեփական զսպման միջոցներ ունենալու անհրաժեշտությունը: 2006թ. Յուսիսային Կորեայի միջուկային փորձարկումներից հետո Ջորջ Բուշն անմիջապես հավաստիացրեց Չարավային Կորեային եւ ճապոնիային, որ Միացյալ Նահանգները պատրաստ է պաշտպանել նրանց:

Միջուկային զենքի արագ եւ լայնածավալ տարածման դեմ ուղղված այս բոլոր ջանքերի շնորհիվ է, որ միջուկային դոմինոյի էֆեկտը միայն առասպել է մնում: Մերձավոր Արեւելքում չկա որեւէ նշան, որ այդ դոմինոն փլուզվելու է մոտակա ժամանակներս: Չնայած շատ կառավարություններ համարում են, որ Իրանին պետք է գալու 1-3 տարի ժամանակ առոմային ռումբ ստեղծելու համար, Մերձավոր Արեւելքի մնացած բոլոր երկրները (բացի Իսրայելից) նման հնարավորություն կստանան առնվազն 10-15 տարի հետո:

Ժամանակային նման սահմանները լայն հնարավորություններ են ընձեռում Վաշինգտոնին՝ անվտանգություն երաշխավորող պայմանագրեր կնքել կամ վերահաստատել այն երկրների հետ, որոնք կարող են ցանկանալ զարգացնել իրենց սեփական միջուկային ծրագրերը՝ ի պատասխան հնարավոր իրանական ռումբի: Իրականում այդ գործընթացն արդեն սկսվել է: 2009թ. հուլիսին ԱՄՆ պետքարտուղար Յիլարի Բլինթոնը խոսեց այն հնարավորության մասին, որ Միացյալ Նահանգները կարող է «պաշտպանական հովանոցի» տակ առնել Օոցի տարածաշրջանը եւ աջակցություն ցուցաբերել տարածաշրջանի երկրների ռազմական հնարավորություններն ամրապնդելու ուղղությամբ, այն դեպքում, եթե Իրանը դառնա միջուկային տերություն:

Այլ կերպ ասած՝ Միացյալ Նահանգները փորձում է ամրապնդել միջուկային զենքի չտարածման մշակույթը Մերձավոր Արեւելքում: Վաշինգտոնն արդեն համաձայնագիր է կնքել Արաբական Միացյալ Էմիրությունների հետ, համաձայն որի՝ այս երկիրը հրաժարվում է միջուկային վառելիքի հարստացումից եւ վերամշակումից, ինչը որոշիչ դեր է խաղում միջուկային զենքի ստեղծման հարցում: Փոխարենը՝ Արաբական Միացյալ Էմիրություններն օգնություն կստանա քաղաքացիական միջուկային էներգիայի ծրագրի զարգացման համար: Այս ոճով ԱՄՆ-ը

աշխատում է նաև Սաուդյան Արաբիայի եւ Չորդանանի հետ՝ երկրներ, որոնք նույնպես զբաղվում են քաղաքացիական միջուկային էներգիայի ծրագրերի մշակմամբ, որոնք ուղղված կլինեն էներգիայի ապահովման աղբյուրների դիվերսիֆիկացմանը:

Եվս մեկ ձեռքբերում հանդիսացավ 2010թ. Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրի վերանայմանն ուղղված կոնֆերանսը, որտեղ ԱՄՆ-ը հաստատեց, որ Մերձավոր Արեւելքում միջուկային զենքից ազատ գոտու ստեղծմանը նվիրված հանդիպում է կազմակերպվում: Այդ համագումարը պետք է անցկացվի 2012թ. եւ, չնայած Իսրայելի՝ միջուկային զենք ունենալու փաստը դժվարացնում է խնդիրը, այն կարող է եւս մեկ քայլ հանդիսանալ տարածաշրջանում միջուկային զենքի չտարածման մշակույթի ամրապնդման ուղղությամբ:

Սրանք են այն հիմնական ձեռքբերումները, որոնք ուղղված են Մերձավոր Արեւելքում միջուկային զենքի տարածման կանխարգելմանը, եւ դրանք հակասում են «միջուկային» Իրանի հետ կապված հոռետեսական սցենարներին: Չնայած դեռ քիչ բան է արված՝ մտափոխելու նրանց, ովքեր սպասում են զենքի տարածման հետ կապված շղթայական ռեակցիայի:

Նման մտայնությունների պատճառն այն է, որ Արեւմուտքը լավ չի պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում Իրանը: Ավելի քան երեսնամյա կոշտ հարաբերություններից հետո Արեւմուտքը քիչ բան գիտի Իրանի ղեկավարության, ազգային ձգտումների եւ մշակույթի մասին: Դրա պատճառով, քաղաքական գործիչները շատ ժամանակ են անցկացնում՝ մտածելով այն մասին, թե ինչ հետեւանքներ կունենա Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը, եւ հանգում են շատ պարզեցված եւ մակերեսային եզրակացության, որն արտացոլում է հնացած քաղաքական վախեր, որոնք հաշվի չեն առնում քաղաքական նրբություններն ու ապագայի մասին ժամանակակից պատկերացումները: Չափազանցված մտավախությունները նաև օգտակար եղան. եթե Միացյալ Նահանգները Իրանի միջուկային ձգտումներն ամենահոռետեսական գույներով չներկայացներ, ապա չէր ստանա ԵՄ աջակցությունը վերջին մի քանի տարվա ընթացքում իսլամական հանրապետության դեմ ուղղված պատժամիջոցների կիրառման գործում:

Այս ամենը դեռ չի նշանակում, թե աշխարհը չպետք է անհանգստանա Իրանի միջուկային ծրագրի պատճառով: Միջուկային զենքի նույնիսկ դանդաղ տարածումը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ աշխարհի խաղաղության եւ անվտանգության համար: Ամենից շատ անհանգստություն է առաջացնում այն, որ միջուկային զենք կան «կեղտոտ ռումբ»

ստեղծելու համար անհրաժեշտ նյութերը կարող են ընկնել ահաբեկչական կազմակերպությունների ձեռքը, ինչն ավելի հավանական կլինի, եթե աշխարհում ավելի շատ երկրներ արտադրեն միջուկային վառելիք: Անհանգստության մեկ այլ հիմնավորված պատճառ է մարդկային կամ տեխնոլոգիական սխալը: «Սառը պատերազմի» ժամանակ մի քանի անգամ աշխարհը հայտնվել էր միջուկային պատերազմի եզրին այն պատճառով, որ միջուկային տերությունները մինչեւ վերջ իրար չէին հասկացել:

Այսինքն՝ աշխարհում նոր միջուկային թեժ կետերի անհրաժեշտություն չկա: Բավական է նայել Յուգոսլավիայի և Պակիստանին՝ այս երկու գերթշնամիներին, որոնք ունեն միջուկային զենք եւ ժամանակ առ ժամանակ կանգնում են միջուկային պատերազմի եզրին:

Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման հետ կապված այլ մտավախությունները պակաս համոզիչ են: Հաճախ ասում են, որ Իրանի հարեւանները կդառնան Թեհրանի միջուկային բռնակալության պատանդները: Անկասկած, միջուկային զենք ունեցող Իրանի հեղինակությունը կբարձրանա, կամրապնդվեն նրա դիրքերը տարածաշրջանում, եւ այդ երկիրը կկարողանա ավելի մեծ ճնշում գործադրել հարեւան պետությունների նկատմամբ: Բայց միջուկային զենքի հարձակողական օգտավետությունը հարցական է: Այն չի օգտագործվել Հիրոսիմայից եւ Նագասակիից հետո: Բոլոր միջուկային տերություններն իրենց միջուկային հնարավորություններն օգտագործել են միայն որպես զսպման միջոց, եւ չկա ոչ մի պատճառ մտածելու, թե Իրանը նույն կերպ չի վարվի: Ցանկացած մտավախություն, թե Իրանը կարող է օգտագործել իր միջուկային զենքը, ուղղակի ճշմարտանման չի թվալու: Իսկ առանց ճշմարտանմանության Իրանը, ինչպես ցանկացած այլ երկիր, անկարող կլինի որեւէ այլ երկրի «պատանդ» պահել:

Հայտարարում են նաեւ, որ եթե Իրանը միջուկային զենք ունենա, միջուկային զենքի չտարածման գլոբալ ռեժիմը կփլուզվի: Ըստ այս տեսակետի, միջուկային Իրանը կարող է վնասել Միջուկային զենքի չտարածման պայմանագրին (ՄՁՉՊ), համաձայն որի՝ պետությունները հաստատում են միջուկային զենքի արտադրումը եւ երաշխավորում չզարգացնել միջուկային զենքը: Եթե Իրանը դառնա միջուկային պետություն՝ խախտելով տվյալ պայմանագրի շրջանակներում իր վրա վերցրած պարտականությունները, ապա դա, անշուշտ, հարված կհասցնի ՄՁՉՊ լեգիտիմությանը: Դա ավելին է, քան ուղղակի այն փաստը, որ Իրանը խախտել է պայմանագիրը: Դա կնշանակի, որ ՄՁՉՊ-ն անիմաստ է: ՄՁՉՊ-ն պատմության մեջ ամենահաջող միջազգային պայմանագրերից

է, որին տվյալ պահին մասնակից են գրեթե բոլոր երկրները: Ավելին, քիչ հավանական է, որ պայմանագրի 180 մասնակից երկրները թույլ տան Իրանի միջուկային ծրագրին փլուզել մի ինստիտուտ, որը վերջին տասնամյակների ընթացքում հիմք է հանդիսացել միջուկային զենքի չտարածման համար: Եվ եթե Իրանը կկարողանա փլուզել այն, ապա հարց է ծագում. արդյոք արժե՞ դրան առաջնահերթ կարելորություն տալ:

Անկասկած, աշխարհն ավելի լավ վիճակում կլիներ, եթե Իրանը չունենար միջուկային զենք, եւ միջազգային հանրությունը պետք է անի ամեն ինչ, որպեսզի Իրանը կամ որեւէ այլ երկիր զերծ մնա դրանից: Խնդիրն այն է, որ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման դեմ ուղղված փաստարկները բավական կշիռ ունեն՝ նույնիսկ առանց միջուկային դոմինոյի մասին առասպելի:

**«Foreign affairs»,  
31.08.2010**

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Գազիկ Տերտերյան

«ՊՈՍՏԴԵՄՈԿՐԱՏԻԱ» ԵՎ  
«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ»..... 1

## Արեստակես Սիմավորյան

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 6

## Մինե Թուրոբ

«ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻՆ  
ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է» ..... 10

## Վահրամ Հովյան

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ..... 14

## Բենիամին Պողոսյան

ՆԱՏՕ-Ի ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ..... 19

## Սուրեն Սարյան

ԹՈՒՐՔԻԱ – ՆԱՏՕ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 25

## Հայկ Գաբրիելյան

ԷԳԵՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԹՈՒՐՔ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 30

## Արտաշես Տեր-Հարությունյան

ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 37

## Յոհան Բերգենաս

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԴՈՄԻՆՈՅԻ ԱՌԱՍՊԵԼԸ ..... 44

*Շապիկին պատկերված է  
Թորթունի ջրամբարը  
(Տայք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕԼՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: